«بوزانتيون»
ارمنيجه يومی وسياسی غزته . صاحب امتياز ومدير مسؤل
بوزانت كچيان
مطبعه واداره‌خانه‌سی باب عالی جاده‌سنده ۳۸ نمرولی
دائرۂ مخصوصه‌ده در

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Տարեկան 7 մէճ. վեցամսեայ 3½, եռամսեայ 2։ —Արտասահման 40 ֆր. վեցամսեայ 20, եռամսեայ 10։ Թղթատարի ծախք մեր վրայ, բաց ի Բոսթ Լոքալէ։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ՔՍԱՆ ՓԱՐԱ — ՔՍԱՆ ՓԱՐԱ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲՈՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
Ի գլխաց Թերթին կ'ստորագրէ մի միայն
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆՆ
Առ որ կ'ուղղուին ամէն գրութիւնք

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur-Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab Aali Djaddéssi, No. 38.
CONSTANTINOPLE

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 232 — Կ. ՊՈԼԻՍ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1897 ՕԳՈՍՏՈՍ 4/16 — 18 ՐԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1315 — 4 ԱՂՍՏՈՍ 1313 — Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 232

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ԲԵՐԱՅԻ ԳՈՐԾԵՐԸ

Սա Բերայի դասատուներուն խնդրանքին Բերայի հայ հասարակութեան պատուաբե՞ր վիճակ մ'է արդեօք։ Կիրակի մը գացէք Թաղական խորհրդարան, և հոն ոտքի վրայ շարուած կ'տեսնէք երիտասարդներն և երիտասարդուհիներն որոց յանձնուած է Բերայի հայ հասարակութեան զաւկներուն իմացական և բարոյական կրթութիւնը։ Այս ուսուցիչներ և վարժուհիներ, Թաղական էֆէնտիներուն խոստումին վստահելով, հոն եկած են գոնէ մաս մը բան ընդունելու անվճար մնացած երկու կամ երեք ամսականներէ։ Ուրիշներ հոն գործի համար կուգան, և բնականաբէս կ'հարցնեն թէ ի՛նչ կ'ուզէ այս բազմութիւն, և իմանալով որ Բերայի հինգ վարժարաններուն դասատուներն են անոնք, կ'մեղքնան անոնց խեղճութեան։ Անոնց մէջ կան ալ որ ամսական ընդունելու յուսով հեռաւոր Թաղէ մը եկած են, և ժամերով սպասելէ ետքն, և մանաւանդ գանձապետին հետ թթու կամ կծու խօսքերու փոխանակութենէ մը ետքը, ձեռնունայն կ'մեկնին։ Իրենց վարժապետական կոչումին անարգութիւնն իրենց զգացնելու համար բան մը չի խնայուիր այս կիրակնօրեայ ներկայացումներուն մէջ։ «Այս աս է, կ'ուզէք նէ կուգաք, չէք ուզեր նէ կ'հրաժարիք», ամէնէն քաղաքավարն է բացատրութիւններուն որք յանուն Թաղ. Խորհրդին կ'գործածուին։ Դասատուներուն կողմէ ամենափոքր դիտողութիւն՝ Թաղ. Խորհրդին ամենավերջին խոստումին յիշեցնող՝ անտանելի վիրաւորանք կ'համարուի Թաղական էֆէնտիներուն համար, որք ազգային կրթութեան այս մշակներէն շատ աւելի հնազանդութիւն, հլութիւն, մինչեւ իսկ ստրկութիւն կ'պահանջեն, քան իրենց խոհանոցին կամ տան պարտէզին մշակներէն։ Երբ Թաղին պաշտօնական ներկայացուցիչներն իրենց հետ այսքան խրոխտաբար, գոռոզաբար կ'վարուին, այս ուսուցիչներ ա՛լ ի՞նչ սիրտ կ'ունենան իրենց փափուկ պաշտօնը գոհացուցիչ կերպով վարելու։ Մեր զաւկներուն միտքն ու սիրտը կրթել կ'ակնկալենք այնպիսի գործիչներէ որոց միտք և սիրտ ունենալն անգամ կ'ուրանանք մեք։ Ազգին դրամն անկէ աւելի անշահ և անշնորհ կերպիւ կրնա՞նք գործածել քան այսքան անկանոն և այսքան կոշտ կերպիւ վճարելով դասատուներուն ամսականները։ Աշխարհ գիտէ փորձառութեամբ որ տալը միայն չէ կարեւոր։ տալուն կերպն է կարեւորագոյն։ Եթէ կանոնաւոր չեն վճարումները, դասատուներն ի՛նչ յանցանք ունին. պակսութիւնը Թաղականներուն կողմն է որք չեն յաջողիր երկու ծայրը մէկ բերել։ Այն ատեն, իրենց Թաղականներուն պարտքն է անուշութիւնով վարուիլ դասատուներուն հետ, և այնպէս ընել որ խեղճերը դառնութեամբ չմեկնին Թաղական խորհրդարանէն։ Անոյշ լեզուն օձն իր ծակէն դուրս կ'հանէ, կ'ըսէ ռամկօրէն առածը, մինչ մեր Թաղականներուն լեզուն անանկ է որ կարծես թէ այն օձն անոնց բերնին մէջ իսկ պահուըտած ըլլար։ Ասիկա միայն Բերայի համար չէ որ կ'ըսենք։

Ամէնէն աւելի դիւանին Թաղական Խորհրդոյ գանձապետին վարմունքն է դասատուներուն հետ։ Այս մարդ, նախ և առաջ, Ազգին լեզուն չի հասկնար, և հետեւաբէս, իրեն համար գոց գիրք են Ուսումնական Խորհրդոյ հրահանգները, Բերայի վարժարաններուն կանոնագիրը, կրթական տեղեկագրերը, դասատուներուն խնդրագրերն, ազգային թերթերն, եւն։ Վաճառականութեան կամ սեղանաւորութեան ո՞ր հանքէն դտեր հաներ են այսպիսի գանձ մը, գանձապետ կարգելով զայն։ Մարդը կ'հաւտանք որ շատ պատուաւոր կամ առաքինի մէկն ըլլայ, և շատ յաջող վաճառական, բայց ո՛չ ապաքէն իր լեզուական հմտութեան թերութիւնը կ'դժուարացնէ իրեն տրուած պաշտօնը։ Մարդն ի՛նչ յանցանք ունի, երբ Թաղեցին ստիպեր է զինք այս պաշտօնն ընդունելու։ Պաշտօնական մարմնի մը անդամը, նա՛ մանաւանդ գլխաւոր անդամը, գէթ այն մարմնին պաշտօնական լեզուն հասկնալու կարող ըլլալու չէ՞։ Բերայի գործերն ա՛յնքան խորհրդաւոր և մանուածապատ են որ մայրաքաղաքիս է՛ն ուսումնական Թաղին պարգեւեր են ուսումն և գիտութիւնն այնքան հեռուէն բարեւած անձնաւորութիւն մը։ Ինչ և է, ասիկա Բերայի Թաղեցիներուն գիտնալիք բանն է, եւ իրենց արժանապատուութեան խնդիրն, և մեզ անկ չէ ասկէ աւելի ծանրանալ խնդրոյն այս անձնական և լեզուաբանական կողմին վրայ։ Բայց տեսէք ի՛նչ թիւրիմացութիւններ կ'ծագին՝ իբրեւ հեռաւոր արձագանգ Բաբելոնի Աշտարակին ըլըւարճալի դէպքին. — Գանձապետը կ'ըսէ դասատուներուն թէ ամսականները չէ կարող կանոնաւորապէս վճարել, որովհետեւ Բերայի Պարտուց Հատուցման (կամ Կալուածոց) Ցանձնաժողովը կանոնաւորապէս չի վճարեր ամսական 75 ոսկիի յատկացուած գումարը Բերայի վարժարաններուն համար։ Դասատուներն եկեղեցիէն բակէն կ'անցնին, և ուրիշ դուռ մը կ'զարնեն ուր բազմած է հռչակաւոր պարտազանց Ցանձնաժողովն, և կ'հարցնեն թէ ինչո՛ւ համար Թաղին վարժարաններուն յատկացուած 75 ոսկին չի վճարուիր որ իրենց ալ խեղճութեան վերջ տրուի։ Ցանձնաժողովին գանձապետն ամենայն պաղարեամբ կ'հանէ կ'ցուցնէ մեծանուն Թաղական գանձապետին ստորագրութիւնը կրող ընկալագրերն, որոցմէ կ'երեւի թէ յուլիսի ամսականն ալ մէկտեղ ըլլալով՝ բոլոր ամսականները վճարուած են կալուածոց Սնտուկէն, և այն 75 ոսկիի հաշիւէն Թաղական Խորհուրդը փարա մը անգամ առնելիք չունի։ Այս տեսարանին ներկաներն հազար ու մէկ մեկնութիւն կուտան Թաղական գանձապետին անօրինակ պատասխաններուն։ Կ'ըսեն թէ իր ձեռամբ կատարուած գերեզմանատան պատի նորոգման 200 ոսկիի ծախքը չուզելով Թաղ. Սնտուկէն հանել, կալուածոց սնտուկին վրայ կ'բարդէ, մինչ գերեզմանատունը շահաբեր կալուած մը չէ, և կալուածոց սնտուկը գերեզմանատունէն ո՛չ վարձ կ'ընդունի, ո՛չ ծախք կ'ճանչնայ գերեզմանատան համար, հին ըլլայ թէ նոր։ Հետեւապէս, ճարպիկ գանձապետն այս հաշուական անհամաձայնութեան տուգանքը խեղճ ուսուցիչներուն քամակը կ'բեռցնէ եղեր, անոնց ամսականին համար վճարուած 75 ոսկիէն վար դնելով յիշեալ 200 ոսկիի գումարը։ Իսկ մեք այս թիւրիմացութիւնները բարեմտաբար կը վերագրենք յարգելի էֆէնտիին հայերէն չհասկնալուն միայն, և այս «միջադէպն» ալ այսպէս փակել կ'առաջարկենք։

Թաղ. Խորհրդէն գանգատած ժամանակ, չմոռնանք որ զայն ընտրող ժողովուրդն ա՛լ աւելի յանցաւոր է, երբ այնքան անտարբեր կը գտնուի դպրոցներուն նկատմամբ, ի մէջ այլոց՝ աշակերտներուն ամսաթոշակները չվճարելով։ Ամսական 10—15 ոսկիէն մէջ բան մ'է, կ'ըսեն մեզ, Բերայի հինգ վարժարաններուն մէջ Թոշակներէն հաւաքուած դրամը, մինչ նոյն իսկ Սամաթիա, անցեալ աշունէն ի վեր բաւական բնակիչ այլուր գացած ըլլալով հանդերձ, անկէ աւելի կուտայ, և դեռ մի քանի տարի առաջ, Խասգեղ 1,000 ղրշ. է աւելի Թոշակ կ'հաւաքեր աշակերտներէն։ Բերա բնակիչ չկորոյս գաղթականութեամբ, և ուրիշ Թաղերէ բնակիչ ալ շահեցաւ, այնու հանդերձ իրմէ յետամնաց կարծուած Թաղերէն աւելի անհոգ է իր զաւակաց կրթութեան։ Երբ Թաղեցին այսպէս ըլլայ, ի՞նչ աւելի կ'խնդրենք Թաղականներէն...

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔԷՆ ԷՋ ՄԸ

Բ.

ՔԱՊԻՏՈՒԼԱՍԻՈՆՆԵՐԸ

Քափիդիւլասիոնք օսմ. կառավարութեան շնորհած այն առանձնաշնորհումներն են զորս օտար հպատակները մեր երկրին մէջ կ'վայելեն։ Այս առանձնաշնորհմանց բերմամբ, օտար հպատակները կարգ մը մասնաւոր իրաւունքներ կ'վայելեն։ Ասոնց ծագումն եթէ քննենք, պիտի տեսնենք թէ ուրիշ բան չէ բայց եթէ օսմ. պետութեան վերջին աստիճան հիւրասիրութիւնը։ Առաջին քափիդիւլասիոնին ժամանակ, զոր Քրիստոսի 1536ին, Գանունի Սուլթան Սիւլէյման Գազի Ֆրանսուա Ա. Թագաւորին հպատակաց շնորհեց, օսմ. կառավարութիւնը փառաց գագաթնակէտն հասած էր. օսմ. դրօշը մէկ կողմէն Վիեննա, միւս կողմէն հնդկային ովկիանոսը, Պարսից և Կասպից ծովերը կ'ծածանէր։ Այն ատեն Գաղղիա, չքջապատուած Կարոլոս Ե.ի երկիրներով, (Աւստրիա, Իտալիա, Սպանիա, Հոլլանտա եւ Պելժիա), այն մեծ աշխարհակալին մատնուելու վտանգին մէջ էր։ Եւրոպայի մէջ չկար կառավարութիւն մը որ Ֆրանսայի օգնութեան հասնէր. այն ատեն Թուրքիոյ դաշնակցութիւնը խնդրեց։ Օսմ. կառավարութիւնն ալ, որ Աւստրիոյ սահմանակից ըլլալով, չէր ուզեր այս վերջնոյն այնչափ զօրանալը, սիրով ընդունեց Ֆրանսայի խնդիրքը։ Ասոր վրայ երբ Ֆրանսուայի մասնաւոր դեսպանը՝ Լաֆօռէ՝ Պոլիս գալով նիզակակցութիւն մը կնքուեցաւ, օսմ. կառավարութիւնը, դեսպանին միջնորդութեամբ, գաղղիական հպատակներուն մասնաւոր արտօնութիւններ տուաւ։ Ահա քափիդիւլասիոնք այսպէս ծագում առին։

Ցետոյ միւս կառավարութիւններն ալ դիմում ըրին, որպէս զի օսմ. կառավարութիւնը զիրենք չզրկէ այն արտօնութիւններէն զորս գաղղիացիք Թուրքիոյ մէջ սկսեր էին վայելել։ Օսմ. կառավարութիւնը չմերժեց. 1567ին Աւստրիոյ, 1579ին Անգլիոյ, 1598ին Հոլանտայի և հետզհետէ միւս կառավարութեանց ալ տուաւ այն արտօնութիւններ, և յետոյ քանի որ իրենց հետ դաշնադրութիւն կնքուէր, այդ առանձնաշնորհումներ կ'նորոգուէին։

Հիմա համառօտակի ըսենք թէ ի՛նչ են այս արտօնութիւնք։ 1. Օտար կառավարութեան մը հպատակներուն միջեւ ծագած դատ մը իրենց կառավարութեան հիւպատոսարանին մէջ կը տեսնուի. օսմ. դատարանն այս տեսակ դատ մտիկ չըներ։ Եթէ այդ օտար հպատակներ տարբեր պետութեանց հպատակներ ըլլան, բողոքեալին հիւպատոսարանն անոնց դատը կը վճռէ. բայց այս պարագային մէջ եթէ օսմ. դատարանին դիմուի, աս ալ ձեռնհաս է այդ դատը տեսնելու։ Իսկ ուրիշ երկիրներու մէջ, ամէն դատ, դատաւէրերն ի՛նչ հպատակ որ ըլլան, տեղական դատարանին մէջ կ'տեսնուի։ 2. Եթէ Թուրքիոյ մէջ օտար հպատակ մը մեռնի, անոր ինչքն հիւպատոսարանին կողմէ կ'արձանագրուի, և ժառանգորդներուն միջեւ կ'բաժնուի. Պէյթիւլ մալը չի միջամտեր (*)։ 3. Օսմ. և օտար հպատակներու միջեւ ծագած քաղաքային և պատժական բոլոր դատեր օսմ. դատարաններուն առաջ տեսնուած ատեն, այդ օտար հպատակին հիւպատոսարանէն թարգման մը ներկայ կ'գտնուի։ 4. Երբ օտար հպատակ մը դատարան կոչել, կամ անոր ոեւէ պաշտօնական գրութիւն մը հաղորդել պէտք ըլլայ, այդ գործողութիւններն անոր հիւպատոսարանին միջոցաւ կ'կատարուին՝ օսմ. պաշտօնեայք ուղղակի չեն կրնար կոչել զանոնք, կամ հաղորդել։ 5. Առանց պաշտօնական մուրհակի (ան որ Նօտարիայէն կամ Շէրիէն չէ վաւերացուեր) օսմ. հպատակ մը օտար հպատակի մը դէմ դատ չի կրնար բանալ (**)։ 6. Օսմ. դատարանին օտար հպատակի մը դէմ տուած վճիռներն այն օտար հպատակին հիւպատոսարանին միջոցաւ կ'գործադրուին։ 7. Ոստիկանութիւնն, առանց հիւպատոսարանէն պաշտօնեայ մը ներկայութեան օտար հպատակի մը տունը չի խուզարկեր։ (***)

8. Երբ օտար հպատակ մը դատապարտուի, իրմէ 100ին 2է աւելի ծախք չառնուիր։ (****). —9. Օսմ. դատարանն երբ օտարահպատակներէն մին բանտարկութեան դատապարտէ, այդ օտար հպատակն իր հիւպատոսարանին կը յանձնուի, և պատիժն հիւպատոսարանին միջոցաւ կ'գործադրուի։

*** Սակայն օտարներն այս առանձնաշնորհումներէն կալուածական խնդրոց մէջ չեն կրնար օգտուիլ, որովհետեւ մինչեւ արաբական 1284 Թուականն օտար հպատակներ Թուրքիոյ մէջ անշարժ կալուածի տէր չէին կրնար ըլլալ։ Այս Թուականին մասնաւոր օրէնքով այդ արտօնութիւն շնորհուեցաւ, պայմանաւ որ օտար տէրութիւնք իրենց առանձնաշնորհումները թողուն, և այս իմաստով բրոթօքոլ մը պատրաստուեցաւ։ Այն կառավարութիւններ որ այդ բրոթօքոլը ստորագրեցին, անոնց հպատակները կրնան Թուրքիոյ մէջ — բացի Հիճազի կողմերէն — կալուածի տէր ըլլալ։ Եթէ դատ մը ծագի, թարգման չի գտնուիր։ Ուղղակի դատարան կ'կոչուի, տրուած վճիռներն օսմ. պաշտօնեաներ կ'գործադրեն նէ։ Այս բրոթօքոլը ստորագրող կառավարութիւնք հետեւեալներն են, զորս իրենց ստորագրութեան Թուականի կարգով կ'Թուենք։ 1. Ֆրանսա, 2. Շուետ, 3. Պելժիա, 4. Անգլիա, 5. Աւստրիա, 6. Դանիա, 7. Բրուսիա, 8. Սպանիա, 9. Ցունաստան, 10. Ռուսիա, 11. Իտալիա, 12. Հոլանտա, 13. Միացեալ Նահանգք, 14. Բորդուկալ, 15. Պարսկաստան։ Ասոնցմէ դուրս գտնուող օտար հպատակներ չեն կրնար Թուրքիոյ մէջ կալուածի տէր ըլլալ։

*** Պէտք է աւելցնենք թէ վերը տեսնուած առանձնաշնորհումներէ զատ, Եւրոպացիք չորս արտօնութիւն եւս կ'վայելեն, որ առաջիններուն հետ բաղդատմամբ աւելի կարեւոր են, բայց ո եւ է պայմանագրութեան արդիւնք չեն։ Ասոնք հետեւեալներն են. — 1. Օսմ. և օտար հպատակի մը միջեւ ծագած դատը վերջանալով, երբ դատաւորները խորհրդակցութեան սենեակն երթան, այդ օտարահպատակին թարգմանն ալ խորհրդակցութեան ներկայ կ'գտնուի։ Մինչդեռ պէտք էր միայն դատավարութեան ատեն ներկայ գտնուէր։

2. Օսմ. եւ օտար հպատակներու միջեւ ծագած դատերն առեւտրական դատարանին առաջ կ'տեսնուին, նոյն իսկ եթէ այդ դատեր սովորական (ոչ վաճառականական) դատեր ըլլան։ Սակայն արաբական 1289ին կառավարութեան և դեսպաններուն միջեւ գոյացած համաձայնութեան մը համեմատ, մինչեւ 1000 ղրուշի դատերն ինչպէս նաեւ վարձակալութեան դատերը, Թարգմանին ներկայութեամբը, քաղաքային դատարաններուն առաջ կ'տեսնուին։

3. Երբ առեւտրական դատարանին՝ օսմ. եւ օտար հպատակի միջեւ ծագած դատ ներկայանայ, օտարին թարգմանէն զատ, հիւպատոսարանէն երկու օրէնսգէտ իբրեւ դատաւոր ներկայ կը գտնուին, եւ այսպէս առեւտրական դատարանն, որ ինչպէս ամէն նախագահ ատեան՝ մէկ նախագահ եւ երկու անդամներէ կ'բաղկանայ, այս տեսակ դատերու մէջ, հակառակ Թէշքիլաթի օրէնքին, մէկ նախագահ եւ չորս անդամ կ'ունենայ։ Պոլսոյ մէջ առեւտրական Ա. դատարանը միայն այս տեսակ դատերով կ'զբաղի. գաւառներուն մէջ տեղական դատարաններն այս պաշտօնն ալ կ'կատարեն։

4. Թուրքիոյ մէջ սնանկացող օտար հպատակներուն սնանկութեան գործողութեանց կարգադրութիւնն իրենց հիւպատոսարանին մէջ կ'կատարուի և ո՛չ օսմ. դատարանին։ Այս չորս կէտերուն դէմ կառավարութիւնը միշտ դիտողութիւն ըրած է, եւ ինչպէս լրագրերէն իմացանք, հաշտութեան նոր դաշնագրին մէջ, հելլենահպատակները պիտի զրկուին այս եւ ուրիշ բազմաթիւ արտօնութիւններէ զորս ցարդ կը վայելէին համահաւասար ուրիշ օտարահպատակներու հետ։ Պէտք է յիշեցնենք թէ պարսիկ հպատակներն այս առանձնաշնորհմանց մէկ մեծ մասէն զուրկ կ'գտնուին՝ օսմ. եւ պարսիկ կառավարութեանց միջեւ մասնաւոր պայմանագրութեամբ։

ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ

(*) Բայց եթէ մեռնողը Պարսիկ հպատակ է, Պէյթիւլմալը կրնայ միջամտել. (Ցօդ. 6. 1238ի դաշնգ.)

(**) Բայց այսօր ոչ-պաշտօնական մուրհակներն ալ ընդունելի են. միայն վկաներ չեն ընդունուիր։ Բայց արդէն քաղաքային դատավարութեան օրէնքն 5000 ղրուշ է աւելի գումարներուն նկատմամբ, վկաներուն ունկնդրութիւնն օսմ. հպատակներուն համար ալ կ'արգիլէ։

(***) ١٢٨٤ին ստորագրուած բրոթօքոլով այս կէտ մասամբ բարեփոխուած է։ Այսինքն՝ թէ հիւպատոսն 9 ժամ հեռի ըլլայ, ոստիկանութիւնը կրնայ առանձին գործել։

(****) Սակայն այս 100ին 2 ծախքն՝ իրամի, բէսմը Թահսիլի նման դատական ծախքերն են և օտարներն ալ գայտիյէ, սուրէթ, Թէպլիղը վէքեալէթ եւն. ի նման ծախքերը վճարելու պարտաւոր են։

ԱԶԳ. ԳՈՐԾԵՐՆ Ի ՌՈՍՏՈՍԴՕ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի.)

ՌՈՍՏՈՍԴՕ, 29 Յլս. 97

Քաղաքիս Նորընտիր կառավարիչ Բեգա պէյ յուլիս 25 ուրբաթ օրը Կ. Պոլսէ քաղաքս հասաւ աւստրեան Լոյտի Վէստա շոգենաւով, որ ի պատիւ իր Վսեմ. հիւրին հանդիսական դրօշակներով զարդարուած էր։ Կառավարիչը դիմաւորելու եկած էին քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներէն զատ՝ հայ, յոյն և հրեայ հասարակութեանց հոգեւոր պետերն ու երեւելիներ։ Խաչատեանի աշակերտներն համազգեստով ու Ս. Ցովհաննեան Ազգ. վարժարանի երգեցիկ սանուէնք կարգաւ շարուած էին նաւամատոյցին վրայ, նաեւ ոստիկան զինուորներու ջոկատ մը և թաղապետական բալապաններ բարեւի կեցած էին մաքսատան առջեւ։ Կառավարիչ պէյը ցամաք ելնելուն պէս յունաց վարժարանի թուրք լեզուի ուսուցիչը բարի գալուստ մաղթող ուղերձ մը արտասանեց, և մեր Ազգ. վարժարանի աշակերտները թուրքերէն երգ մը երգեցին, որուն ունկնդրեց մինչեւ վերջն և շնորհակալութիւն յայտնեց։ Ցաջորդ օրն ընդունեց քաղաքիս զանազան հասարակութեանց գլխաւորներուն շնորհաւորական այցելութիւններն և կիրակի հիւպատոսական մարմինը։

*** Նախորդ շաբթու մէջ Ս. Խաչ թաղի Ցիսուսեան վարժարանն և այս շաբաթ բողոքականաց Հայկեան վարժարանն ու Ս. Թագաւորի Ցովհաննեան վարժարաններն իրենց ամավերջի քննութիւնները լրացուցին և դպրոցական ընդհանուր արձակուրդն սկսած է արդէն։ Այս առթիւ կ'արժէ սոյն երեք վարժարանաց վրայ փոքրիկ տեսութիւն մ'ընել։ Ցիսուսեան վարժարանն յուզեալ տարեշրջան մը կ'բոլորէ Թաղային ժողովներու անկերպարան վիճակին և ուսուցչական տարաժամ փոփոխութեանց պատճառաւ, և թէպէտ ընդհանուր առմամբ արդիւնքը բաւական գոհացուցիչ էր, մաղթելի է սակայն որ նոր շրջանին ամէն վէճեր կարգադրուած և իրերն իրենց բնական ընթացքն առնելով, ուսուցիչք հանդարտ մտքով կարող ըլլան իրենց գործին փարիլ և առաւել արդիւնաւէտ ընծայել աշխատութիւնները։ Հայկեան վարժարանի տեսչութիւնն յանձնուած է տարիէ մը ի վեր Համբարձում էֆ. Գույումճեանի որ՝ հակառակ ձեռքն ունեցած սուղ միջոցներուն, յաջող տարեշրջան մը բոլորած էր և այս առթիւ քննչաց գոհունակութեան արժանացած։ Գալով Ցովհաննեան վարժարանին, Քննիչ Ցանձնաժողովը դասաւանդուած ամէն առարկաններուն մէջ աշակերտները թէ՛ գրաւորապէս եւ թէ՛ բերանացի մանրամասն քննելէ ետքն, իր տեղեկագիրը տուած է Թաղ. Խորհրդոյ։ Այդ տեղեկագիրը, լաւծիս նայելով, մանրամասն պարզած է դպրոցին ուսումնական վիճակն, և երբ պաշտօնական գործողութիւնները լրանան, անոր պատճէնը կ'ղրկեմ Բիւզանդիոնի մէջ հրատարակուելու համար։

*** Ցովհաննեան վարժարանն իր տարեշրջանը փակեց դպրոցական շքեղ հանդէսով մը որ կատարուեցաւ Ցլս. 27 կիրակի օր, ժողովրդեան խուռն և երկսեռ բազմութեան մը առջեւ։ Ներկայ էին նաև քաղաքիս Նորընտիր կառավարիչն, օգնականը, Թահրիրաթ միւտիրին, Թղթատարական տեսուչն, հիւպատոսական մարմնն ամբողջութեամբ և իրենց ընտանիքներով մէկտեղ, նաև յոյն պատուաւոր ընտանիքներ։ Դպրոցին մեծ սրահին պատերն և բեմը զարդարուած էին արեւելեան թանկագին գորգերով և ընտիր ձեռագործներով. բեմին ճակատը դրուած էր կայսերական Թուղրան ոսկեզօծ տառերով քանդակուած։ Միր երիտասարդներէ բաղկացած կարգադիր մասնախումբ մը կ'հսկէր ժողովրդեան հանգստութեան և հանդէսին բարեկարգութեան մասին։ Ժամը 7 ին սկսաւ հանդէսը Նախագահութեամբ Առաջն. Տեղապահ Ս. Հօր։ Երաժշտասէրներու Նուագախումբն Համիտիյէի քայլերգն հնչեցուց, որուն յոտնկայս ունկնդրեցին հանդիսականները. ապա վարժարանին տեսուչը թուրքերէն ճառով մը բարի գալուստ մաղթեց Վսեմ. Կառավարչին, որոյ ուսումնասէր ոգիին ապացոյցն էր այս հանդէսին ներկայ գտնուիլը, քանի որ ճամբորդութեան յոգնութիւններէն դեռ չազատած, իր ժամանումէն օր մը ետքն հաճած էր պատուել հանդէսը։ Առ այս պատասխանելով Կառավարիչ պէյն ըսաւ. «Ամէն բանէ առաջ պարտք սեպեցի սոյն հանդէսին ներկայ գտնուիլ, և այս առթիւ վարժարանին յառաջդիմութիւնը տեսնելով շատ գոհ մնացի»։ Ասկէ ետքը տեսուչ էֆ.ն կարգաց վարժարանին համառօտ տեղեկագիրն որով կ'պարզէր անցեալ շրջանին մէջ վարժարանին վիճակն և ներկային հետեւելիք ուղղութիւնը։ Ասոր յաջորդեց շրջանաւարտներու վկայականաց բաշխումը։ Այս տարուան շրջանաւարտները թիւն էր 12, որուն 7ը մանչ և 5ն աղջիկ. ասոնք կարդ. Կանոնագրի տրամադրութեանց համեմատ Տարր. Նախակրթութեան ընթացքը բոլորելով կ'մեկնին վարժարանէն։ Առաջն. Տեղապահ Հայրը փակեց հանդէսը շնորհակալութիւն յայտնելով Թաղ. Խորհրդոյ, Հոգաբարձութեան և ուսուցչական մարմնոյն, որք ձեռք ձեռքի տալով՝ յաջողած էին արդիւնալից տարեշրջան մը բոլորել։ Հանդէսին գլխաւոր հրապոյրը կ'կազմէր վարժարանի երգեցիկ խումբն որք Եւրոպական եղանակներու վրայ յօրինուած երկձայն և եռաձայն քաղցրալուր երգեր կ'երգէին առաջնորդութեամբ իրենց անխոնջ ուսուցչին եւ բազմաշխատ Սարգիս էֆ. Թադէոսեանի. նաև երաժշտասէրներու նուագախումբն, որ կազմուած է հայ, յոյն և եւրոպացի բարեկեցիկ ծնողաց պատանիներէ, որք իրենց բարեյօժար մասնակցութիւնը նուիրած էին սոյն հանդէսին։ Երգեցիկ խումբն ու նուագախումբը փոխն ի փոխն երգելով ու նուագելով երեք երկար հաճոյալի ժամեր անցուցին, առանց զգացնելու հանդիսականաց խուռն բազմութեան ո՛չ Ցուլիսի հրատշոր տաքութիւնն և ո՛չ մթնոլորտին հեղձուցիչ չունչը։ Բ.

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ. —Հելլէն կառավարութիւնն երկար ծանուցագիր մը ուղղեց Մեծ Տէրութեանց՝ Գերմանիոյ առաջարկութեանց առթիւ ի մասին ելմտական քոնդրոլին։ Ծանուցագիրը կ'յիշեցնէ թէ Յունաստան տէրութեանց յանձնած է հաշտութեան դաշնագրին վրայ բանակցելու գործն, և ՚ոչ թէ կարգադրելու Յունաստանի յարաբերութիւններն իր պահանջատէրերուն հետ։ Թէեւ դաշնադրութեան կարգ մը ուրիշ պայմաններ Յունաստանի շատ աննպաստ ըլլան, սակայն հելլէն կառավարութիւնը չէ բողոքած։ Օրինակի համար, պատերազմական տուգանքի գումարն եղած ծախքէն աւելի է և Յունաստանի հասոյթներն անբաւական են անոր վճարման։ Սահմանագլխի ուղղութիւնն զինուորական նոր ծախքեր պիտի պատճառէ Յունաստանի։ Գալով Գերմանիոյ առաջարկին, Յունաստան կ'յայտարարէ թէ պիտի չընդունի։ Տէյլի Նիւզ, որ այս լուրն ստոյգ աղբիւրէ առած ըլլալը կ'յայտարարէ, կ'ըսէ թէ Հելլէն դահլիճը պիտի հրաժարի, եթէ Տէրութիւնք պնդեն Գերմանիոյ առաջարկին ընդունելութեան վրայ։

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴ. — Արտաքին գործոց նախարարն և դեսպանք վաղը պիտի գումարուին ի Թոփհանէ։ Թէվֆիգ փաշա անցեալ շաբթու նոր առաջարկութիւններ ըրեր է դեսպանաց, որք զայնս մատուցեր են իրենց կառավարութեանց և նոր հրահանգի կ'սպասեն։ Նայէ Ֆրայէ Բրեսէ իր օգոստոս 11 ի թուոյն մէջ կ'ըսէ թէ դեսպանախորհուրդը տակաւին երկու շաբաթ պիտի տեւէ։

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՐԴՈՅ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ. — Անցեալ ԴՇ.ի Լոնտոնեան լրագիրք հետեւեալը կ'հրատարակեն Կ. Պոլսէ. — «Հաշտութեան Դաշնագրին Քափիթիւլասիոններու վերաբերեալ Յօդուածն անցեալ շաբթու սկզբնատառերով ստորագրուած ըլլալուն հակառակ, դարձեալ վիճաբանութեան ենթարկեցաւ։ Թեսալեան սահմանագլխին գծման նկատմամբ ալ նոր խնդիրներ երեւան ելան։ Բայց ընդհանուր կացութեան նայելով, Հաշտութեան Նախաշաւիղներն ի մօտոյ պիտի ստորագրուին,» (ըստ վերջին լրոյ, մինչեւ Օգոստ. 15/27)։

ՔՈՆԴՐՈԼ.—Անցեալ ԴՇ.ի Պերլինի լրագիրք ծանուցին թէ «Գերմանիա չի պահանջեր որ Յունաստանի բոլոր ելեւմուտքն Եւրոպեան Քոնդրոլի ենթարկին, այլ այն հասոյթներ միայն որք երաշխաւորութիւն պիտի ցուցուին Յունաստանի Հին Պարտքին, և Տուգանքի յատկացեալ նոր Փոխառութեան։ Ահա՛ այս տեսակ Քոնդրոլի մը հիմա բոլոր Տէրութիւնք հաւանած են։ Թէեւ Յունաստան կ'դիմադրէ, բայց իրաւունք չունի, քանի որ կանխաւ համակերպած էր Տէրութեանց տալիք որոշումներուն։ Իսկ Թեսալիոյ մասին Բ. Դրան և Դեսպանաց միջեւ տակաւին անհամաձայնութիւնն հարթուած չէ։»

ՆՈՐԿԻՈՍ ԹԱԳԱՒՈՐ, իր ազգականներուն կողմէ եղած դիտողութեան վրայ, ետ կեցեր է հրաժարելու դիտումէն՝ երբ Քոնդրոլն հաստատուի։

ՖԵՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆԻՆ Պոլիս գալուն առթիւ, Վիեննայի թերթերը կ'գրեն թէ զանազան մայրաքաղաքներու մէջ ուր վերջերս այցելեց՝ իշխանին խոհեմութեան յորդորներ կարդացուած են, որպէս զի յանդուգն արարքներէ զգուշանայ եւ զգուշացնէ իր կառավարութիւնը։ Իշխանը խնդրամատոյց եղած է միայն մակեդոնեան եկեղեցիներու, մետրապոլիտներու եւ դպրոցներու ծանօթ խնդրին համար։

ԿՐԵՏԷԻ անգլ. նաւատորմին հրամատար ծովակալ Հարիս ճամբայ ելած է քննական պտոյտ մը կատարելու կղզւոյն շուրջը։

ԲԱՐԻԶԷ օգոստոս 15 թուով կ'հեռագրեն թէ Ֆոռի մարտանաւը Թուլոնէ Կրետէ ուղեւորեր է։

ԱԹԷՆՔԷ կ'հեռագրուի թէ գահաժառանգին կինը՝ Սոֆիա իշխանուհին Վիլհէլմսրուհէ պիտի երթայ՝ իր մօր Ֆրետերիք կայսրուհւոյն մօտ՝ Վիլհէլմ կայսեր հետ հաշտուելու։

ՍԵՐՊԻՈՅ սահմանագլխին դէպքերը քննելու համար կարգեալ յանձնաժողովը մէկ քանի պաշտօնէից պաշտօնանկութիւնն հարկ դատեր է։

ԿՐՈՒՄՊՔՈՎ ՓԱՇԱ Պերլին ուղեւորութիւնն յետաձգեց։

ՌՈՒՍԱԿԱՆ Նովօրին մարտանաւը Բոլայէ ճամբայ ելեր է դէպի Միջերկրական։

ՎՈԼՈՅԻ մաքսատան հասոյթն, օսմ. վարչութեան ձեռքն անցնելէ ի վեր, 2,689,980 ղրշ. եղած է։

ԶԱՐԻՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ. — Թուրք լրագրի մը մէջ կ'կարդանք.— «Վերջերս Սերպիոյ սահմանագլխոյն վրայ պատահած դէպքերուն առթիւ, Թուրքիոյ կայսրը խիստ ծանուցագիր մը ուղղելով սերպ կառավարութեան, պահանջեր է կարեւորը անօրինել՝ այս անկարգութեանց վերջ մը տալու։ Բացարձակապէս ծանուցեր է նաև թէ հակառակ պարագային, սերպ կառավարութեան նկատմամբ խստութիւն ի գործ պիտի դրուի։

ԹՈՐՓԻԼԱՆԱՒ.— Աժտէր և Սէհամ Թորփիլանաւերն շաբաթ իրիկուն ժամ 12ին Պոլսոյ նաւահանգիստէն Միջերկրական ուղեւորեցան։

Տոքդ. ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՅԺ, ՄԱՆԿԱԲԱՐՁ

Թէ իբրեւ Պետական հիւանդանոցներու բժիշկ եւ իբրեւ քաղաքապետական բժիշկ, եւ թէ իբրեւ մասնաւոր բժիշկ, իր երկարամեայ փորձառութեամբ, ի վիճակի է գոհ ընելու իրեն դիմողներ։ Վերաբուժութեան ու Մանկաբարձութեան մէջ ի կիր կ'առնու ամենանոր գործիները զորս այս անգամ իրեն հետ բերած է Բարիզէ, տեղւոյն մեծ հիւանդանոցներուն մէջ անոնց գործածութիւնը ուսումնասիրելէն ետքը, պաշտօնական ու մասնաւոր ամենավերջին մեթոտներն, որոց շնորհիւ Վերաբուժութեան ու Մանկաբարձութեան գործողութիւնք այնքան անվտանգ եւ ապահով կը հանդիսանան արդի Գիտութեան եւ Արուեստին առջեւ. Ամէն օր հիւանդ կ'ընդունի իր տունը, Լանկա, Թուլումպա-Մէյտանը, Թ. 128, եւ Բշ., Եշ. եւ Շբ. օրերը ժամ 4-6 Մէրհամէթեան դեղարանը Պանչէ-Գափու: Եւ. նոյն ժամերուն աղքատներ ձրի կ'նայի Մէրհամէթեան դեղարանին մէջ: Իսկ Գշ. կէս օրէն ետք աղքատ հիւանդները ձրի կ'դարմանէ Անձոն էֆ. Գալֆաեանի դեղարանին մէջ ի Լանկա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Հնդկաստանի Խայպէրի մէջ.—Շաբաթ իրիկուան սուրհանդակաւ առնուած անգլ. լրագիրք հեռագրեր կ'պարունակեն, ծանուցանող թէ Սվադի խլամ ցեղերուն և Մահսուտ Վազիրի խլամ ցեղերուն ապստամբութենէն ետքը, Մոհմընտ խլամ ցեղն եւս (Բէշավուրի համբաւեալ կիրճին մօտ) ոտք ելած է անգլ. իշխանութեան դէմ, և փորձած է գրաւել Շապգատարի ամրոցն, եւ գերի վարել զայն պաշտպանող անգլիացի և հնդիկ զօրքը։ Յարձակող խլամք լաւ զինեալ 6,000 հոգի էին, խնամով պատրաստած էին իրենց յատակագիծն, եւ այնքան ուժգնապէս յարձակեցան որ քիչ մնաց ամէն կողմէ պաշարէին ամրոցը։ Բայց ամրոցին պահապաններն, Ուն դնդապետին հրամանաց ներքեւ, աղէկ դէմ դրին, և անոնց նեղ վիճակն իմանալով, զօր. Էլլիս միայն հեծելազօրք և լեռնային թնդանօթ առնլով օգնութեան փութաց։ Օգս. 9ին մեծ ճակատամարտ մը տեղի ունեցաւ։ Բոլոր թնդանօթները կրակ ըրին։ Զօր. Էլլիս, ապստամբաց դիրքերն աղէկ մը ռմբակոծելէ ետքն, յարձակման նշանը տուաւ թէ՛ հնդիկ և թէ անգլ. զօրքերուն։ Թշնամին աղէկ նշան կ'առնուր։ Ադքինսըն հազարապետին և Զիյն տեղակալին ձիերը զարնուեցան։ Հազարապետ Լըմպ եւ Թնդանօթաձիգ հարիւրապետ Պլէգըր վիրաւորուեցան ծանրապէս, և Զիյն տեղակալ թեթեւապէս։ Լեռնականք չդիմացան թնդանօթներուն եւ ձիաւորներուն միացեալ կրակին։ Բուռն դիմադրութենէ ետքն, իրիկունը ցրուեցան, լեռներուն մէջ ապաստանելով։ Անգլիացիք խոհեմութիւն համարեցին դարձեալ ամրոցին մէջ և շուրջը գիշերել։ Բայց կ'կարծուի թէ թշնամին ա՛լ պիտի չհամարձակի կրկնել յարձակումը։ 50 հոգի վիրաւորուեցան անգլիացիներէն եւ 12 հոգի մեռան, որոց մեծ մասն հնդիկ զօրք։— Անգլ. լրագիրք դիտել կուտան թէ կարճ միջոցի մը մէջ յաջորդաբար երեք կէտի վրայ լեռնական խլամք ոտք կ'ելնեն անգլ. վարչութեան դէմ։

ՍՈՒՏԱՆ.—Սէրտար Հէրպէրդ Քիչնըր փաշա առաջին յաջողուած մ'ունեցաւ դէպ ի Խարթում իր նոր արշաւանքին մէջ։ Բուռն պայքարէ մը ետքը գրաւեց Ապու Համատ։ Խարթումի Էմիրին զօրքերը՝ Տէրվիշները՝ Պէրպէրէ եկած և մեծ ոյժով գրաւած էին զԱպու Համատ։ Մէրավիէ ելնելով 18 մղոն քալելէ ետքը, Քիչնըր փաշայի զօրքերը կռիւի սկսան, որ մէկ ժամ տեւեց։ Բայց Տէրվիշները քաղաքին մէջ խիստ դիմադրութիւնը շարունակեցին, և տունէ տուն կռուիլ պէտք եղաւ։ Եգիպտական բանակը փողոցէ փողոց անցնելով սուրն ի ձեռին, վերջապէս վանեց թշնամին, բայց շատ ցաւ պատճառեց անգլ. երկու ճարտար սպաներու սպանումը։

—Լոնտոնի լրագիրք կ'ծանուցանեն թէ բազմաթիւ զինուորք պատրաստ կ'գտնուին Տուվրէ շոգենաւ նստելու, մէկ մասն Հնդկաստան, միւսը Սուտան երթալու համար։

ԵԳԻՊՏՈՍ.—Գահիրէէ անցեալ կիրակի հեռագրուած է անգլ. թերթերուն.—«Խտիվն իր կիսամսեայ սովորական ընդունելութիւնն ըրաւ շաբաթ օր։ Եւրոպացիք քիչ՝որ էին։ Շատ Եւրոպացիք բացակայ մնացին, զի Խտիվին կողմէ Օրլէանի Հանրի իշխանին եղած պատիւները դիտողութեան առիթ եղան», (այսինքն՝ Անգլիացիները վշտացուցին և անոր համար չեկան)։

ԱՆԳԼ. ՄԱՄՈՒԼՆ իբրեւ ուշագրաւ կ'յիշէ մեր Թուրք պաշտօնակիցներուն վերջին խմբագրականներն, որոնցմով քննադատուած է Հնդկաստանի անգլ. Վարչութիւնը, վերջին խռովութեանց առթիւ, յորում հնդիկ՝ —իսլամ տարրը կարեւոր դեր մը կ'կատարէ։

ՔԼՈՆՏԱՅՔԻ մէջ հանքագործութեան դժուարութիւնները ծանուցանող անգլ. պաշտօնական ազդարարութենէն ետքը, Քանատայի եւ Մ. Նահանգաց կառավարութիւններն եւ նոյնիմաստ ազդարարութիւններ հրատարակեցին։ Իրաւ է որ ոսկին առատ է, գետի աւազներուն եւ նոյն իսկ չոր դաշտերուն մէջ։ Բայց տեղը շատ լերկ, անբերրի, հեռաւոր, ցուրտ և անմատչելի է, և անօթութենէ մեռնողներ շատ պիտի։ Գարնան պէտք է ճամբայ ելնել, ամառն և աշուն ուտեստ և պաշար պէտք է տանիլ։ Կ'գուշակուի որ գալ ամառ Քլոնտայք խուժողները նոյնքան բազմաթիւ պիտի ըլլան որքան էին երբեմն Քալիֆորնիա խուժողներն, որք այն ամայի երկիրը շէն նահանգ մը դարձուցին կարճ ժամանակի մէջ։

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ.—Վիեննայի մէջ զրոյց կայ թէ պուլկար վարչապետ Մ. Սդոիլով հրաժարական տուեր է։

ԲԻԼՔ օգոստոս 13 թուով կ'հեռագրեն թէ Վիլհէլմ կայսրն ու կայսրուհին նոյն իրիկունն հոն ժամներ են Հոհէնցոլըրն զբօսանաւով։

Մ. ՔԱՆՈՎԱՍ.—Սպանիոյ հանգուցեալ վարչապետը 1830ին ծնաւ ի Մալակա։ Անդոնիօ Քանովաս տէլ Քասդիլլօ Մատրիտի մէջ իրաւաբանութիւն ուսաւ և յետոյ խմբագրապետ եղաւ Քոռրէօի, որ պահպանողականաց բերանն է։ 1852ին սկսաւ իր քաղաքական ասպարէզը։ Իր ծնողավայրը ներկայացուց երեսփոխանական ժողովին մէջ և միշտ վերընտրուեցաւ։ 1855ին Քատիքսի կառավարիչ եղաւ և 1856 ին Վատիկանի սպանիական դեսպանատան գործակատար։ Այս պաշտօնին մէջ պատրաստեց այն պատմական յիշատակագիրն որ հիմ բռնուեցաւ եկեղեցական պայմանադրութեան։ 1861ին առաջին անգամ նախարարութեան մէջ մտաւ իբրեւ խորհրդական ներքին գործոց։ Այդ թուականէն մասնակցեցաւ պահպանողական գրեթէ բոլոր դահլիճներուն։ Ելմտական ու գաղթային նախարար եղաւ. այդ միջոցին օրինագիծ մը ներկայացուց գերութիւնը բառնալու գաղթավայրերու մէջէն։ Դահլիճին անկումէն յետոյ Երեսփ. Ժողովին մէջ իբրեւ տաղանդաւոր ճարտարախօս պաշտպանեց իր ազատական գաղափարները, զորս հաշտեցուցած էր միապետականութեան հետ։ 1868 ին երբ կառավարական ձեւը փոխուեցաւ, աքսորուեցաւ, որովհետեւ սահմանադրական միապետական դրութիւնը պաշտպանեց։ Ֆրանսա աքսորուած ատեն Իզապէլ նախորդ թագուհւոյն մօտ մնաց, որ իրեն յանձնեց գահաժառանգ Ալֆոնսի դաստիարակութիւնը։ Մ. Քանովաս երիտասարդ իշխանին միտքին մէջ տպաւորեց իր ազատական գաղափարները։ 1874 դեկտ. 31ին Քանովաս հոգին եղաւ այն շարժման որ կառավարական դրութիւնը փոխեց և Մարշալ Մարդինէս Քամբոս ու զօր. Բրիմօ տէ Րիվէրա Սպանիոյ թագաւոր հռչակեցին զԱլֆոնս ԺԲ.։ Մ. Քանովաս վարչապետ եղաւ և մինչեւ 1875 պահեց այդ պաշտօնը։ Այդ թուականին քաշուեցաւ, չկրնալով առաջ տանիլ ժողովրդային քուէարկութիւնն Երեսփ. Ժողովին համար։ Յաջորդ տարին նորէն նախարարապետ եղաւ եւ անկից ի վեր զանազան ընդմիջումներով շարունակեց։ 1876ին երբ վարչապետ էր մաքառեցաւ Քարլոսեաններուն դէմ, անոնց առաջին շարժումը զսպեց. սահմանադրութիւնը քուէարկել տուաւ և երկրին ելեւմուտքը վերակազմեց։ Այս չորս գլխաւոր գործերն յաջողցնելով, վարձատրուեցաւ Ոսկեգեղմ (դուազոն տ'օռ) պատուանշանի մանեակով։ 1879ին Քուպայի մէջ գործադրելի բարենորոգմանց խնդրոյն առթիւ ծագած անհամաձայնութեան հետեւանօք քաշուեցաւ պաշտօնէ, խորհուրդ տալով Թագաւորին իրեն յաջորդ կարգել Մարդինէզ Քամբոս մարեշալն, որ Հավանայէն դարձած էր։ Նոյն տարին Մարդինէզ Քամբոս հրաժարեցաւ և Քանովաս նորէն պաշտօնի կոչուեցաւ։ 1885ին՝ Ալֆոնս ԺԲ.ի մահուան և Քարոլին կղզիներու Գերմանիոյ կողմէ գրաւուելու միջոցին, Քանովաս հրաժարեցաւ և իրեն յաջորդեց ազատականաց պետ Մ. Սակաստա։ Վերջապէս մէկ քանի անգամներ քաշուելէ յետոյ 1895ին նորէն պաշտօնի կոչուեցաւ դժուարին պարագաներու մէջ՝ ներսէն անիշխանականաց շարժումն և դուրսէն Քուպայի և Փիլիպեան կղզիներու ապստամբութիւնները։ Մ. Քանովաս այս ամէնուն ալ արիութեամբ կուրծք տուաւ. Ինքն էր որ ըսաւ սա խօսքը.— «Քանի որ մէկ մարդ և մէկ ֆր. ունենանք մեր իրաւունքները պաշտպանելու, պիտի չթողունք զՔուպա։» Մ. Քանովաս դարուս ամենէն նշանաւոր քաղաքագէտներէ մին ըլլալէ զատ գրագէտ ալ էր։ Անդամ էր Սպանիոյ արքայական Ակադեմիային և պատմական Ակադեմիային։ Զանազան աշխատութիւններ ունի։ Իր պատմական հեղինակութեանց հետ, որք են «Պատմութիւն Տանն Աւստրիոյ» «Պատմութիւն Անկման Սպանիոյ» ունի նաև Սպանիոյ քաղաքականութեան վրայ բազմաթիւ տետրակներ, Սպանիական թատրոնին վրայ ուսումնասիրութիւններ, քնարերգական բանաստեղծութիւններ՝ հրատարակեալ 1851ին, և զանազան քրոնիկներ։

—Խնամակալ Թագուհին սա գիրն ուղղեց տիկին Քանովասի.— «Զգածեալ եւ վշտաբեկ այս սոսկալի դժբախտութենէն, բառ չեմ կրնար գտնել ցաւս յայտնելու։ Կ'ուզէի մխիթարանք մը ղրկել ձեզի, բայց ձեզի հետ ալտասուելէ զատ ուրիշ բան չեմ կարող ընել այն սիրեցեալ էակին վրայ զոր կորուսիք և որ շատ կ'սիրէր զձեզ։ Ես ալ շատ բան կորսնցուցի. կորսնցուցի հաւատարիմ խորհրդականն որ ինձ կ'օգնէր և որուն այնչափ պէտք ունէի։ Առ իմ ամուսնոյս Ալֆոնս ԺԲ.՝ մատուցած մեծ ծառայութիւններուն համար կ'յարգէի զինքը։ Գահուն համար իր ըրած նոր զոհողութիւններով աւելի համակրած էի իրեն։ Հայրենիքն, երկիրն և պատմութիւնը պիտի ճանչնան անոր արժանիքը։ Զաւակներս ինձ կ'միանան արքունեաց և ազգին այս սուգին մէջ։ Միշտ կ'աղօթեմ անոր համար։ Երկինք համակրութիւն շնորհէ ձեզ։»

ՄԷՆԱՄԱՐՏ.— Իտալական լրագիր մը կ'ծանուցանէ թէ Դուրինի կոմսը մենամարտի հրաւէր ուղղեր է Օրլէանի իշխանին։ Կոմսը գաղտնի մեկներ է. ոստիկանութիւնն անգամ տեղեկութիւն չունի եղեր։ Իրեն ընկերացեր են Ճինորի մարքիզն և թիկնապահ մը։ Կոմսն եղբօրորդին է Ումպէրդօ թագաւորին և եղբայր՝ Աոստի դուքսին. ամուսնացած է Օրլէանեան գերդաստանի պետին քրոջ՝ Էլէն իշխանուհւոյն հետ։

—Օրլէանի իշխանը պատասխանելով Աոստի դուքսին նամակին, որով կը խնդրէր թէ արիւնահեղութիւն տեղի չունենայ, յայտարարեր է որ անկարելի է իրեն ընկրկիլ։

—Կ'հաւաստեն թէ Օրլէանի իշխանն ընդուներ է Դուրինի կոմսին մենամարտի հրաւէրը։ Կոմսը Բարիզ ժամներ է։ Իշխանին և կոմսին վկաներն ուրբաթ իրիկուն գումարուելով մենամարտի պայմանները կարգադրեցին։

ՔԱՆԱՏԱՅԻ վարչապետ Սըր Ուիլ. Լօրիէ Հռոմ գնաց և Ս. Պապին պիտի ներկայանայ։

ՓԻԼԻՊՊԵԱՆ կղզիներէ կ'հեռագրեն թէ ապստամբապետ Ակինալտօ, Լանէրա և ուրիշներ 3000 մարդով լեռներէն իջեր և յարձակեր են գիւղի մը վրայ, բայց հարիւր հոգի կորսնցնելով ետ մղուեր են։ Սպանիացիք ունեցեր են մէկ մեռեալ և եօթն վիրաւոր։

ՌՈՒՍՃՈՒՔԻ արկածին քննութիւնն սկսաւ։ Վկայից յայտարարութեանց մէջ հակասութիւն կայ։ 318 գործաւորէ մէկը միայն ողջ առողջ մնաց։ Ռումանիոյ թագաւորը ցաւակցութիւն յայտնեց։ Ֆէրտինանդին իշխանուհին 10000 ֆր. տուաւ ի նպաստ զոհերուն, պուլկար կառավարութիւնն 5000 ֆր., Ռուսճուքի քաղաքապետական խորհուրդն՝ 3000 և արկածեալ վառօդարանին տէրք՝ Իվանով եղբարք՝ 20 հազար ֆր.։ Մեռելոց թիւը դեռ կարելի չէ ճշդել։ Ամէն օր մարդու դիակ կ'գտնուի Դանուբէ։ Արկածէն երկու օր յետոյ դաշտերու մէջ ալ դիակներ գտնուեր են։

Մ. ՆԱՀԱՆԳԱՑ մաքսային նոր սակացոյցին դէմ բողոքները կ'շարունակուին. մինչեւ 100 տոլար արժէքով անձնական գոյքերը մաքսէ ազատ կ'թողուին։ Վերջերս Նիւ Եորք ժամանող Քաբրիչեան պարողներու խումբ մը իր հագուստներուն համար 900 ֆր. վճարեր է, թէեւ Մ. Նահանգներէ դուրս ելնելուն ետ պիտի առնու։ Ֆրանսացի մը 35 տոլար վճարեր է ճախարակի մը համար զոր Րէօնդկէնեան ճառագայթի փորձերուն մէջ պիտի գործածէ։ Մաքսի այս բարձրացում շատ արդիւնք չարտադրեր, որովհետեւ ուղեւորներու գոյքերը խիստ քննութեան ենթարկելու համար մեծ ծախք կ'ըլլայ. այդպէս, պարողներու զանուած շոգենաւէն հարիւր տոլար զուտ շահ մնացեր է, մաքսին ծախքերն հանելէ յետոյ։

ՊԷԼԺԻՈՅ Թագաւորը դատ բացեր է գերման երկու թերթերու՝ Համպուրկէր Էքօի և Բրոյէդարիայի դէմ, որք նախատական լեզուաւ խօսած էին Քոնկոյի ելմտական մատակարարութեան վրայ։

ՄՈՍԿՈՒԱՅԻ բժշկական համաժողովին ներկայ կ'գտնուին 2400 ռուս բժիշկ, 800 գերման, 600 աւստրեւմաճառ, 500 ֆրանսական, 250 անգլ. ու իտալեան, 100 զանազան ազգերէ. գումար 5000։

ՌՈՒՍԻՈՅ պետական խորհուրդն երրորդ օրէնք մը քուէարկեց ալքոլի մենավաճառին վրայ, որոշելով հիմակուընէ մինչեւ 1902 յուլիս 1 զայն գործադրել Ռուսիոյ այն բոլոր մասերուն մէջ, որոց համար որոշում չէր տրուած 1894ին ու 95ին առաջին երկու օրէնքներով։ Բեդերսպուրկի, Վարշաւայի և լեհական հին նահանգաց մէջ յառաջիկայ յունուարին պիտի գործադրուի։ Այս կերպով նահանգներու չորրորդ խումբն է որ ալքոլի մենավաճառին պիտի ենթարկի, որ հինգ ամիսէն գործադրելի պիտի ըլլայ 56 միլիոն բնակիչներու համար։

ՍՈՒՄԱՏՐԱՅԷՆ հետեւեալը կ'հաղորդեն Հոլանտայի գաղթային նախարարին.— Բաքան Պարոյէ և Բաքան Սոդէ ապստամբք անհետացան։ Հոլանտացիք ունեցան մեռեալ մը և 21 վիրաւոր։ Ապստամբք 110 մեռեալ թողուցին պատերազմի դաշտին վրայ։ Այդ տեղերու մէջ երկու կէտ առժամաբար գրաւուեցան Հոլանտացւոց կողմէ։

ՖԷՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ.— Շաբաթ օրն ի Ռուսճուք մետրապոլիտ Տ. Գրիգորիոս մարզանոց հրապարակին վրայ գոհաբանական աղօթքներ կարդաց Ֆէրտինանտ իշխանին տասներորդ տարեդարձին առթիւ։ Իշխանը ներկայ գտնուեցաւ զօրահանդէսի մը։ 15,000ի մօտ ժողովուրդ ներկայ էր։ Հանդէսէն յետոյ հիւպատոսք, պաշտօնական անձնաւորութիւնք իրենց շնորհաւորութիւնները ներկայացուցին իշխանին։ Պատերազմական նախարարն, յանուն զինուորականութեան, յիշատակ մը յանձնեց իշխանին՝ իր տասը տարուան բարւոք աշխատութեանց համար։ Ժողովուրդը նոյն միջոցին եռանդագին ցոյցեր ըրաւ։ Յանուն զինուորականութեան երեք հարիւր հոգինոց սեղան մը տրուեցաւ ի պատիւ իշխանին որ պուլկար զինուորին կենաց բաժակ պարպեց։ Զարն իմանալով որ Բեդերսպուրկի պուլկար գործակատարը Ռուսճուք պիտի երթայ իշխանին տարեդարձին առթիւ, կրօնական պատկեր մը յանձնեց Պորիս իշխանին տրուելու։

ՀԵՌԱԳՐԵՐ

ԲԱՐԻԶ, 14 օգոստոս.— Լսէնէ կը հեռագրեն թէ Քրուբի զինագործարաններն մէջ բազմահարուած թնդանօթներ կ'շինուին ի հաշիւ օսմ. կառավարութեան։

ՀՌՈՄ.— Ս. Պապը շատ ցաւեցաւ Մ. Քանովասի մահուան վրայ։ Իր անունով ցաւակցութիւն յայտնել տուաւ թէ՛ Սպանիոյ կառավարութեան և թէ՛ հանգուցեալոյն ընտանեաց։

ԱՅՍ ԱՌՏՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՍՕՖԻԱ, 14 օգոստոս.— Աւստրիոյ և Պուլկարիոյ միջեւ յարաբերութեանց ձգտեալ վիճակին առթիւ կ'ըսուի թէ Ֆէրտինանտ իշխան պաշտօնի վրայ պիտի պահէ զՄ. Սդոիլով, միայն թէ փոխանակ արտաքին գործոց նախարարութեան, ներքին գործոց նախարարի պաշտօն պիտի վարէ։

—Ռուսիոյ և Պուլկարիոյ միջեւ կնքեալ առեւտրական դաշնագիրն օգոստոս 5/17էն սկսեալ գործադրութեան պիտի դրուի։

ՊԷԼԿՐԱՏ. — Սերպիոյ Թագաւորը Սեպտ.ին Լոնտոն պիտի երթայ։

ԼՈՆՏՈՆ. — Թագուհին հրամայեց յոբելեանի չքադրամ տալ Հնդկաստանի բանակին մէջ ծառայող բնիկներուն։ Նոյնպէս արժանաւոր սպայից ալ Հնդիկ կայսրութեան պատուանշաններէն։

—Բէնանէ կ'ծանուցանեն թէ անգլ. Բէօ շոգենաւին մէջ գտնուող Չինացիք նոյն շոգենաւին նաւապետն ու տասներեք նաւազներն սպաններ և 15,000 տոլարի մօտ գումար մը յափշտակելով փախեր են։ Չինացիք իբրեւ ուղեւոր կ'գտնուէին եղեր շոգենաւին մէջ։ Կառավարութիւնն հրահանգ տուեր է զանոնք ձերբակալելու։

ՊՐԻՍԷԼ.— Միջազգային խաղաղութեան համաժողովն որոշեց իրաւաբարական մնայուն ատեան մը կազմել՝ Անգլիոյ և Պելժիոյ միջեւ ծագելիք անհամաձայնութիւնները կարգադրելու։

ՎԻԼՀԷԼՄՍՀԱՎԷՆ. — Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին հոս ժամանեցին։ Ժողովուրդն համակրական ցոյցեր ըրաւ։

ՊԵՐԼԻՆ. — Արտաքին գործոց նախարար Մ. Պիւլով հոս ժամանեց։

ՍՏԱՎԱՆՃԷՐ.— Շոգենաւի մը նաւապետը՝ Նորվեկիոյ հարաւային արեւմտեան կողմն օդապարիկ մը տեսաւ։ Կ'կարծուի թէ Անտրէի անուն անձին օդապարիկն եղած ըլլայ, որ օր մը առաջ ճամբայ ելած էր։

ՀՌՈՄ.— Բարիզէ կ'հեռագրեն թէ Բշ.(այսօր) Օրլէանի իշխանն և Դուրինի կոմսը պիտի մենամարտին օտար երկրի մը մէջ։ Կոմսը՝ պատերազմական նախարարէն ու հրամատարներէն արտօնութիւն չառած ուղղակի մենամարտի հրաւէր ուղղեր է Օրլէանի իշխանին։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ.— Քրասնոէ Սէլոյի մէջ թնդանօթաձգութեան փորձի մը պահուն ռումբ մը պայթելով զինուորներէ մին մեռեր է և երեքն ալ վիրաւորուեր են, Զարն ու Զարուհին հիւանդանոց երթալով այցելեր են վիրաւորելոց։

ՊԵՐԼԻՆ.— Կայսրը բոլոր տէրութեանց հաւանութիւնն ստացաւ եւրոպական տէրութեանց ոստիկաններէն ոստիկանութեան խառն մարմին մը կազմելու անիշխանականներուն դէմ։

ՄԷՍՏՈՒՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ — ՎԱՐՆԱ

Հաստատեալ 1884 ին, Հրամանաւ Կրթական Նախարարութեան

Տնօրէնութիւնս պատիւ ունի ծանուցանել իր նախկին աշակերտներուն և առ հասարակ բոլոր հասարակութեան թէ, պուլկարական ազգայիններու եւս օգտակար հանդիսանալու համար, վարժարանը փոխադրած է Վառնա, ուր պիտի վերաբացուի, յայտագրի կարեւոր բարեփոխումներով, յառաջիկայ Սեպտ. 15ին։ Կ'ընդունուին մի միայն գիշերօթիկ աշակերտներ, որոնք ընտանեկան կռիկ և խնամոտ շրջանակի մը մէջ, և առաջնորդութեամբ ձեռնհաս ուսուցիչներու, հիմնական և արագ զարգացում կ'ստանան լեզուաց, (հայ., օսմ., ֆրանս. եւ պուլկարերէն՝ կամաւոր) նախնական և երկրորդական գիտութեանց, գրչութեանց և գեղարուեստի ճիւղերուն մէջ։ Տարեթոշակն է 30 օսմ. ոսկի, վեցամսեան կանխիկ վճարելի։ Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել նամակով առ, Հիմնադիր-Տնօրէն

3—6 Գ. Պ. ՄԷՍՏՈՒՃԵԱՆ

Pensionnat «Mestoudjian»
Rue Botéva, 82. — IV VARNA
(Bulgarie)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ առաւօտ Ս. Պատրիարք Հայրը Մայր-Եկեղեցի իջաւ, ուր ներկայ էին երեսեւ ժողովրդեան հոծ բազմութիւն։ Ն. Սրբազնութիւն պերճախօս քարոզ մը տուաւ օրուան տօնին առթիւ «Սրբոց Որդւոց և Թոռանց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին» շեշտելով Արիստակէսի, Վրդանէսի, Յուսիկան, Գրիգորիսի և Դանիէլի կատարած սրբազան դերերն՝ հանդէպ Հայ. Եկեղեցւոյ։ Յետ Ժամերգութեան Մայր-Եկեղեցւոյ Խորհրդարանն առաջնորդուեցաւ, ուր նորընտիր Թաղ. Խորհրդոյ անդամներն հրաւիրուած՝ ներկայ էին։ Իր նախագահութեան տակ առաջին նիստն ընել տուաւ, և պաշտօնապէս հաստատեց իրենց ընտրութիւնն և շնորհաւորեց յանուն Ազգ. Վարչութեան, յորդորելով որ թաղին անտանելի վիճակը դարմանելու համար պէտք եղած միջոցները խորհին ժամ առաջ, որոց դիւրութիւն տալու համար ինքը միշտ պատրաստ է։ Ետոյ Ն. Սրբազնութիւն առանձին տեսութիւն մը ունեցաւ եպիսկոպոսաց հետ, որ երէկ ի պատիւ Սրբազան Պատրիարքին, Մայր-Եկեղեցի իջած և դասը կանգնած էին վեղարով ու փիլոնով։ Երբ Ս. Պատրիարք Հայրը մեկնեցաւ, եւ Երուսաղէմատուն գնաց, Մայր-Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդն իր դիւանը կազմեց հետեւեալ կերպով։ Սեպուհ էֆ. Բլոտեան՝ Ատենապետ։ Մեսրոպ էֆ. Պէյ-

լիկճեան՝ Ատենադպիր։ Նշան էֆ. Սարքեան՝ Գանձապետ։ Խորհուրդը՝ քանի մը ընթացիկ գործեր տնօրինելէ յետոյ, ցրուեցաւ շաբաթն երկու նիստ ընելու պայմանաւ։

—Վաղը Ս. Պատրիարքին անուան տարեդարձն ըլլալով, Մայր-Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր ժամերգութիւնք պիտի կատարուին։ Մայր-Եկեղեցւոյ դպրաց դասն ի պատիւ Ս. Պատրիարքին, պիտի մասնակցի խմբովին եկեղեցական երգասացութեանց։ Ընդունելութիւնք պիտի կատարուին յետ ժամերգութեան, Ազգ. Պատրիարքարանի մէջ։

—Այս առաւօտ Քաղ. Ժողովոյ Յարաբերական գործոց Յանձնաժողովն իր անդամներէն Նորատունկեան Գաբրիէլ էֆ.ի բնակարանին մէջ իր նիստը պիտի գումարէ, նախագահութեամբ Ս. Պատրիարքին, որու ի պատիւ սեղան մը պիտի տայ Նորատունկեան էֆ.։

—Բիլիսէ 10 որբեր բերուեցան շաբաթ օրը՝ Սէմէրճեան Իսկէնտէր վարժապետի առաջնորդութեամբ, և ուղղակի Որբանոց առաջնորդուեցան։ Իզմիր և Ադր. Պոլիս ղրկուելիք որբերն՝ որ Շր. կամ այսօր պիտի ղրկուէին, տակաւին հոս պիտի մնան քանի մը օր։ Այժմ, դուրսէն եկած որբերուն թիւն՝ որք բերուած են Եդեսիայէ, Սիսէ, Բիլիսէ, Խարբերդէ և Արաբկիրէ, 68ի հասած է։ Ասոնք կ'պատսպարուին առ այժմ Հիւանդանոցն առանձին շէնքի մը մէջ, որոց վերատեսուչ կարգած է Ս. Պատրիարքն՝ Հանգ. Այվազեան Գէորգ էֆ.ի որդին՝ Արմենակ Յ. Գ. Այվազեան որ ուսանող և միանգամայն ուսուցիչ է հոն։

—Ս. Յակոբայ Որբանոցին մէջ երկու տարիներէ ի վեր կրթական պաշտօն կ'վարէ Իփրանոսեան Գրիգոր էֆ. որ Գէորգեան Ճեմարանի 1894ի շրջանաւարտներէն է։ Ամասիոյ առաջն. Տեղապահ Տ. Նիկողայոս վրդ. եւ գաւառական ժողովը Ս. Պատրիարքին պաշտօնագիր մը ուղղած են որ Իփրանոսեան Գրիգոր էֆ.ն վարդապետ ձեռնադրելով, Մարսուանու Զարխաթան Ս. Աստուածածնայ Վանուց Միաբանութեան համար, յԱմասիա ղրկէ, որպէս զի օգնէ յիշեալ Վանքին մէջ բացուելիք ընծայարանին։ Արդէն Արմաշու Դպրեվանուց մէջ Ամասիայի Յովհան Բերաաճեան, տարի մը յետոյ վրդ. ձեռնադրուելով, Ամասիա պիտի վերադառնայ, նոյն նպատակաւ։

—Շաբաթ օրը Մայր-եկեղեցւոյ քահանաներէն Տ. Արսէն Տէր-Յովսէփեան Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ գանձատան սրբանօթներն և իրեղէնները ցուցակագրեալ յանձնեց իր յաջորդին՝ Պատրիարքարանի կրօնային դիւանապետ Փէհլիվանեան Տ. Խորէն Աւագ քահանայի՝ ի ներկայութեան Խնամակալութեան, որ այս առթիւ գոհունակութիւն յայտնած է իրեն բարւոք պաշտօնավարութեան համար։

—Մայր. Եկեղեցւոյ և միացեալ չորս Թաղից Աղքատախնամ ընկերութեան Նորընտիր Տնօրէն Խորհրդոյ ընտրութեան օրինաւորութիւնն հաստատուած ըլլալով, Ս. Պատրիարքն իր օրհնութեան յատուկ կոնդակաւ վաւերացուցած է. Խորհուրդն երէկ առաւօտ սկսած է գործի՝ նոր ոգեւորութեամբ մը, եկամուտի և հասոյթի նոր աղբիւրներ գտնելու համար։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է դիւրամատչելի պայմաններով՝ միջնակարգ հաստատուն կրթութիւն մը տալ իր ուսանողներուն։ Ունի ուսուցիչներու փորձ ու կարող խումբ մը։ Աւանդուած լեզուներն են հայերէն, անգլիերէն, թուրքերէն, ֆրանսերէն եւ լատիներէն։ Մասնաւոր խնամք կ'տարուի գիտական ճիւղերուն, որոնց ուսուցումն մեծապէս կ'նպաստեն վարժարանիս կոկիկ եւ նպատակայարմար բնախօսական և բնագիտական հաւաքածոյները։

Գիւղին առողջ կլիման եւ վարժարանին ներքին ողջպահիկ կարգադրութիւնները մասնաւորապէս կ'յանձնարարուին ծնողքներու ուշադրութեան։

Գիշերօթիկ աշակերտներէ պահանջուած տարեթոշակն է տասնըհինգ (15) Օսմ. ոսկի, ուր վճարելի Սեպտեմբերին սկիզբն և մնացած կէսը՝ Յունվարի վերջերը։

Նոր տարեշրջանը կ'սկսի երեքշաբթի Սեպտեմբեր 7 ին (Ն. Տ.)։

Մանրամասն տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝ Տքթ. Չէմպրսի (Պարտիզակ) կամ Յովհաննէս աղա Գոնտայեանի, Ամերիգան խան, Ստամպոլ, որոնցմէ նաեւ կարելի է ստանալ վարժարանին Նոր Յայտագիրը։ 4-8

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Խնամակալութիւնս կ'փութայ ծանուցանել որ, Ազգ. Կեդր. Վարժարանի վերաբացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտ. 1ին Բշ. օրը։ Աշակերտիլ փափաքողք կ'հրաւիրուին ներկայ Թուականէս սկսեալ՝ ամէն Բշ. Եշ. Ուր. և Շբ. օրերը ներկայանալ Խնամակալութեանս և անուննին արձանագրել տալով, հարկ եղած տեղեկութիւններն ստանալ։ Մուտքի քննութիւնք տեղի պիտի ունենան Օգոստոս 20 Դշ. օրը։ Իսկ Թաղային Նախակրթարանի վերաբացումը տեղի պիտի ունենայ ներկայ ամսոյ 20ին և դասախօսութիւնք պիտի սկսին Օգոստոս 25 Բշ. օրը։

Ի դիմաց Խնամակալութեան Կեդրոնական Վարժարանի

Վ. Ատենադպիր — Վ. Ատենապետ
ՅԱԿՈԲ ԽՍԱՃԵԱՆ — Յ. ՅԱԿՈԲԵԱՆ
6—1 (կնիք)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Լիբանանու կառավարիչ Նաում փաշա վերահաստատուեցաւ իր պաշտօնին մէջ։

—Չէքմէճէ գաւառակին Գայմագամի օգնական անուանեցաւ Խաքէչէի առեւտրական ջնջեալ դատարանին նախկին նախագահ Բէրիքլի էֆ.։

—Ականակուռ Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ կայս. Խատէմէններու Ֆէրիդ Հիւսէյին փաշայի և Վհհ. Սուլթանի սենեկապետներէն Մէհմէտ պէյի։

—Պուլկար կառավարութեան ցոյց տուած հաւատարմական գործերուն առթիւ, Ա. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ ելմտական տեսուչ Կէչէվ էֆ.ի, Ա. կարգի Մէճիտիյէ՝ Ներքին գործոց տեսուչ Պէնէվ էֆ.ի, դատական տեսուչ Թոտորով էֆ.ի, հանրօգուտ շինութեանց տեսուչ Մաճարով էֆ.ի եւ կրթական տեսուչին։

—Բ. կարգի Շէֆգադ տրուեցաւ Պետական Խորհրդոյ քաղաքային ճիւղին անդամ Սամի պէյի կնոջ։ Բ. կարգի Շէֆգադ՝ կեդրոնական ու Ա. զօրաբաժնին հրամատար Սաատէտտին փաշայի մեծ աղջկան և Գ. կարգի՝ երկրորդ աղջկան։ Գ. կարգի Շէֆգադ՝ Գասթէմունիի կուսակալ Էնիս փաշայի կնոջ։

ՊՈՒԼԿԱՐԻՈՑ Ֆէրտինանտ իշխանին անուանման 10րդ տարեդարձին առթիւ, շաբաթ առաւօտ Բերայի պուլկար եկեղեցւոյն մէջ գոհաբանական աղօթքներ մատուցուեցան ի ներկայութեան Ամեն. Եկզարքին, գործակատար Մ. Մարքովի և այլ երեւելեաց։ Այս արարողութենէն յետոյ, Մ. Մարքով գործակատարութեան պաշտօնատան մէջ ընդունեց պուլկար երեւելեաց շնորհաւորութիւնները։ Այս առթիւ Վհհ. Սուլթանին կենաց համար մաղթանքներ եղան, ինչպէս նաեւ իշխանին եւ իր գերդաստանին։

—Վհհ. Սուլթանն այս առթիւ Լիագաթի ոսկի և արծաթ չքադրամները շնորհեց Մ. Մարքովի։

—Սոֆիայի օսմ. Քոմիսէրն իշխանին անուանման 10րդ տարեդարձին ի պատիւ, կայս. հրամանաւ, լուսավառութիւն կատարեր է։

ՊԱՐՍԻՑ Շահն Առիւծ եւ Արեւ պատուանշանի Ա. աստիճանը նուիրեց Վհհ. Սուլթանի սենեկապետ և կայս. Պալատան Բ. քարտուղար Իզզէթ պէյի։

ԽԱԼԻՖԱՅՈՒԹԻՒՆ.— Թուրք թերթ մը «Իսլամական աշխարհ ազգն ու օսմ. տէրութիւնը» խորագրով յօդուած մը հրատարակած է, որոյ մէջ կ'ըսէ թէ բոլոր իսլամք պարտին սիրով փարիլ Խալիֆայութեան գահուն, և թէ իսլամական կրօնքը թէև յաւիտենական, բայց չի կրնար կանգուն մնալ առանց Խալիֆայութեան շարունակման։ «Իսլամութեան կեդրոնն է Խալիֆայութիւնն որ կ'պաշտպանէ բոլոր իսլամները։ Իսլամութեան էական պայմաններէն մին է հնազանդութիւն։ Իսլամութիւնն, սակայն զատ, կը պահանջէ եռանդ, կորով, փոխադարձ օգնութիւն և այս տեսակ ուրիշ յատկութիւններ, եւ ասոր կ'հետեւի թէ իսլամք, որք հաւատացեալի փառայեղ անունը կ'կրեն, անլուծելի կապերով կապուած ըլլալու են իրարու հետ»։ Թուրք թերթը կ'քննէ ապա օսմ. կայս. գերդաստանին կողմէ իսլամութեան մատուցուած ծառայութիւնները։ «Ամենակարող օսմ. կայս. գերդաստանին յանձնած է Մեծ-Խալիֆայութիւնը։ Իսլամութեան դրօշն 300 միլիոն իսլամ կ'հովանաւորէ, և Օսմ. մեծ կայսրութիւնն է որ իր քաղաքական և հողային կարեւորութեան պատճառաւ, խաղաղութեան իրաւարարն է բոլոր իսլամ ժողովրդոց մէջ։ Եւ ինչպէս Սուլթան Սիւլէյմանի եւ Եւրոպիոյ վեհապետներէն մեծ մասին միջեւ փոխանակուած գիրերէ կ'տեսնուի, իր այս կացութեան պատճառաւ է որ Եւրոպացի Վեհապետք Օսմ. Տէրութեան պաշտպանութիւնը խնդրած են իրենց իսլամ հպատակաց համար և այդու հասած են իրենց առաջադրած նպատակին»։

«Տասն և չորս դարերու միջոցին, իրարու յաջորդող զանազան իսլամ Պետութեանց մէջ, Օսմ. Կայսրութիւնն է միայն որ ապրած է։ Իր զօրութեամբ երբեմն դողացուց զհամայն աշխարհ, և ահով ու զարմացմամբ լցուց զայն։ Իր հիմնարկութենէն մինչեւ այսօր, այս Կայսրութիւն մեծամեծ ծառայութիւններ մատոյց իսլամութեան։ Քանի որ այսպէս է, կարելի՞ բան է որ իսլամները սիրով չփարին Խալիֆայութեան, մանաւանդ որ Գուրանն ալ կ'պատուիրէ սիրել զայն։ Իսլամք իրենց այս սէրովն է որ աստուածային շնորհաց եւ վարձուց կ'արժանանան և կ'յարգուին մարդոցմէ։ Մեծ-Խալիֆան, մեր Օգոստափառ Տէրը, բոլոր իսլամներուն հոգւոյն հայրն ըլլալով, ամէն իսլամ նոյն պարտականութիւններն ունի Անոր նկատմամբ, զորս ունի իր բուն հօրը նկատմամբ։ Այս սէրն իբրեւ անհրաժեշտ հարկ մը կ'դառնայ, երբ մտածուի թէ Վեհ. Սուլթանը բարոյապէս և նիւթապէս կը պաշտպանէ իսլամական կրօնքն և իր հայրական պարտքը կ'կատարէ իր բարեգործութիւնները սփռելով բովանդակ աշխարհի իսլամներուն վրայ»։ Թուրք թերթը կ'եզրակացնէ ըսելով թէ իսլամք աշխարհի ո՛ր մասին մէջ ալ ըլլան, պէտք է բարձր զգացումներով տոգորուած ըլլան առ գահն Խալիֆայութեան, վասն զի իսլամին յաւիտենական կրօնքը չի կրնար կանգուն մնալ, բայց եթէ Խալիֆայութեան շարունակութեամբ։

ՄԱԽՍՈՒՍԷԻ Սաքարիա շոգենաւն, որ Շր. Սեւ ծովէն Պոլսոյ նաւահանգիստը ժամանեց, Կիրասոնէ առած էր 194 սնտուկ Մարթինի հրացանի փամփուշտ և 60 սնտուկ Մարթինի հրացան։ Սամսոնէ՝ 298 սնտուկ նոյն տեսակ փամփուշտ, 80 սնտուկ հրացան և 16 սնտուկ սուին։

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ քարտուղարներէն Քեամիլ էֆ. որ անցեալները Պերլին գացած էր, երէկ մայրաքաղաքս դարձաւ։

ԷՆԿԻՒՐԻԷ կ'գրեն թէ այս տարուան հունձքն ուրիշ տարիներու հետ բաղդատմամբ շատ առատ է։ Ժամանակէ մ'ի վեր ցորենին գինը 12 ղրշ. կ'արժէր, սակայն վերջին շաբթուն գիները բարձրացեր են եւ հիմա գինը 17—20 ղրշ.ի կ'ծախուի, որով հնձոց առատութեան հետ գնոց յաւելումն ալ միանալով, երկրագործ ժողովուրդը ցնծութեամբ լցուցած է։

ԶՄԻՒՌ.—Այս տարի Ուրլայի գաւառակին մէջ, չամիչին քանակութիւնն 140,000 կենդինարի չափ պիտի ըլլայ, որ նախորդ տարիներու հետ բաղդատմամբ շատ պակաս է։ Ասոր պատճառն է որթալուծն և յորդահոս տեղատարափները։

ԶՄԻՒՌՆԱԿԱՆ թերթ մը կ'ծանուցանէ թէ Իզմիրի Ֆրանսական արդի հիւպատոս Մ. Րուկոն պիտի փոխուի և անոր պիտի յաջորդէ կամ Դամասկոսի հիւպատոս Մ. Քիլուա եւ կամ Մ. Րէնեալ որ Անատոլուի անցեալ տարուան առեւտրական վիճակը քննած էր։

ՀԱՑԻ ԳԻՆԸ.— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը, կայսերական հրամանաւ, որոշեց նահանգներէն տեղեկութիւն ուզել թէ այս տարուան հունձքն ո՞րչափ եղած է և տեղական պիտոյից բաւելէ վերջ, ո՛րչափ բան արտածելի կ'մնայ, ինչպէս նաեւ հրահանգ տուաւ որ արտածելի ցորենները Պոլիս կամ ուրիշ կարօտ գաւառները ղրկուին։ Այս մասին հեռագիրներ ուղղուեցան Րումէլի, Տրապիզոն, Պրուսա, Այտըն, Գոնիա, Էնկիւրիւ, Սվազ, Խարբերդ, Գասթէմունի, Ատանա և Արքիպեղագոսի նահանգը։ Սվազի նահանգէն և Ճանիկի գաւառակէն եկած պաշտօնական տեղեկութիւնք կ'հաստատեն թէ այս տարուան հունձքը շատ առատ է և շատ մը արմտիք կայ արտածելի։ Կուսակալութիւնք միանգամայն պիտի տեղեկագրեն թէ աւելորդ ցորենն ի՞նչ ճամբով աժան և դիւրին է փոխադրել ի Պոլիս։ Անկից զատ, նոյն նախարարութիւնը Մախսուսէի ընկերութեան հետ կարգադրութիւն մ'ընելու վրայ է ծովու ճամբով փոխադրուելիք ցորեններու համար, և տեղացի ջաղացպաններն ալ հրաւիրելով յանձնարարեր է որ տեղական ցորեններն ընդ փոյթ աղալու միջոցներ ձեռք առնուն։ Փռապաններն ալ բնիկ ալիւրն այսուհետեւ օտար ալիւրներէն նախամեծար համարելով, ժողովրդեան օգտին աշխատելու համար ազգասիրութիւններ ընդուներ են։

ԷԿԶԱՐՔ Տ. ՅՈՍԻՓ.— Թ. Հաքիքաթ իբրեւ անհիմն կ'հերքէ պուլկար թերթի մը այն լուրը թէ Պուլկարաց Էկզարք Ամեն. Տ. Յոսիփ հրաժարեցուած եւ անոր յաջորդած ըլլայ Տ. Բլէժենդ։

ԳԵՐՄԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՔ.— Իզմիրի երկու գերման վաճառականք Գումգալէ անուն տեղն 250 արտավար տեղ մը պիտի գնեն՝ Գերմանեայէ Իզմիր գաղթելիք մէկ քանի երկրագործ ընտանեաց համար։

ԴԱՏԱԿԱՆ նախարարութիւնն հարցման մը ի պատասխան ծանոյց ամէն կողմ թէ պահանջքի խնդրոյ մը համար վերջնական հանգամանք ստացած վճռագրի մը մէջ եթէ տոկոս նշանակուած չէ, գործադրութեան միջոցին պէտք չէ տոկոս գանձել։

ԳՈՂՈՒԹԻՒՆ.— Իգտամ կ'պատմէ թէ յուլիս 20ի գիշերն Ակնայ Վանք գիւղին մէջ Եփրատ գետին մօտ գտնուած Այիեարկի եկեղեցին գող մտնելով 35 օխայի չափ արծաթեայ անօթներ գողցեր են։ Տեղական կառավարութիւնն իմանալով, Գայմագամն անմիջապէս ոստիկաններով եկեղեցին գացեր և յետ քննութեան հաստատեր է թէ գողերը Բէլէկի միջոցաւ գետն անցեր, երկաթով եկեղեցւոյն դուռները խորտակեր և գողօնը քաղաք տարեր են։ Ոստիկանութիւն կատարուելով գողօնը գտնուեր է Ակնայ Սանտըգ Պաղլարը անուն տեղը քարերու մէջ։ Անօթներն եկեղեցւոյն յանձնուեր և հեղինակները ձերբակալուեր են։

ՊԱԼԻԱՅԻ հանքէն իրենց բնակարանը՝ Սելանիկ դարձող չորս գործաւորք Պանտրմայի և Սոմայի մէջտեղն սպանուած գտնուեր են։ Գործաւորաց մին երիցագոյն մարդ մ'էր, միւս երկուքն զաւակներն էին եւ չորրորդն ալ եղբօրորդին։

ՊՐՈՒՍԱՅԻ մէջ Ապազա Մահմուտ անուն աւազակն իր վեց ընկերներով ձերբակալուեր է։

ԵՐԿԱՐԱԿԵԱՑ.—Գոնիայի պաշտօնական թերթը կ'ծանուցանէ թէ Կուսինայի գաւառակին մէջ Իսմայիլ անուն 148 տարեկան ծերունի մը դեռ կ'ապրի և եօթն մանչ, չորս աղջիկ եւ 200էն աւելի թոռն ու թոռնորդի ունի եղեր։

ԱՐԿԱԾ.—Նախընթաց գիշեր, Բերայի Թիւնէլ փողոցին մէջ, արիւնլուայ մարդ մը գտնուեցաւ որ տան մը բարձր պատուհանէն վար ինկած կամ վար նետուած էր։ Ոստիկանութիւնը կ'ջանայ իրականութիւնն երեւան հանելու, թէև վիրաւորեալն իրեն եղած հարցումներն անպատասխանի թողլու կ'յամառի։

ՈՃԻՐ.— Շաբաթ օրը Ղալաթիոյ մէջ երկու Թուրք իրարու հետ կռուի բռնուելով, մին զմիւսը դաշոյնով ծանրապէս վիրաւորեց։ Վիրաւորեալը քիչ վերջը մեռաւ, իսկ մարդասպանն որ Ինկիլիզ Եօմէր անուն վաղեմի չարագործ մ'է, ձերբակալուեցաւ։

ԵՂԵՌՆԱԴԱՏ ատեանը շաբաթ օր 15 տարուան բանտարկութեան դատապարտեց Զիւլթովցի պոլաճի Սալիհն որ իր կինը խեղդելէ յետոյ, մարմինը վերմակի մը մէջ փաթթելով հակ մը շինած ու Սիրքէճիի կայարանին մօտ բերած նետած էր։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.— Պալաթու մէջ բանջարավաճառ Թանաշ անցեալ օր ինքզինքը խանութին մէջ կախեց։

ՄՈՍ Ընկերութեան Թէմս շոգենաւը, Նաւապետ Հըրտ, ամսոյս դէպ ի 8ին Լիվըրբուլէ հոս կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել որ ամէն օր մինչեւ կէսօր կը գտնուի նախկին տեղն Սկիւտարի չուկան Մանքէմէ փողոց պարսիկ ծխավաճառին վերի յարկը։ Կէսօրէն վերջը Բերա Կալաթա-Սէրայի վարժարանին դիմաց Թիւ 200 ապարթմանն Ա. յարկ Թիւ 3։ Վկայեալ եւ ծանօթ ատամնաբոյժն յանձն կ'առնու ակռայի վիրաբուժական ամէն գործողութիւնք ի հարկին թմրեցուցիչ դեղով։ Նոր դրութեամբ կը պատրաստէ բերնի եւ դէմքի յարմար առանց կեռի, առանց զսպանակի և արմատներու վրայ առանց քիմքի, պատուական արհեստական ամէն ձեւ ակռայ։ Դիմողք գոհ պիտի մնան գիներու չափաւորութենէն եւ գործողութեանց կատարելութենէն։ Գչ. խորհրդակցութիւնք ձրի։ 22—53

Տե՛ս Չորրորդ երես Սինկէրի ճշմարիտ կարի մեքենաներուն ծանուցումը։

ՏՈՔԹՈՐ Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՎԿԱՅԵԱԼ ԱՄԵՐԻԿԵԱՆ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

Հաստատեալ յամին 1852

Նորահնար գործիքի մը միջոցաւ ամենասաստիկ ցաւած ակռաները, մէկ անգամէն վայրկենապէս կը լեցնեն, ցաւով դիմել եւ բուժուած վերադառնալ։ Կատարելագործեալ եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ակռաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, [illegible] (ըստ ատրիքի), [illegible] երաշխաւորեալ։ «Սկոռբիթ» կոչուած բերնի հիւանդութիւնը, երեք այցելութեամբ կատարելապէս կը բուժեն, ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու, եւ նորահնար աքցաններու միջոցաւ առանց ցաւի ատամնահանութիւն։

Թիւ 396 Մեծ-Փողոց Բերա (Նանիի գործեվրատան վրայի յարկը ճիշդ Ձբելուգճեանց դէմ)։

Դասըգիւղի յաճախորդք կրնան դիմել նաեւ իրենց բնակարանը թիւ 1 Նոր բացուած Խրիսովէլի փողոց ամէն օր։

Ց. Գ. — Հաւասարելու համար Եւրոպիոյ եւ Ամերիկայի առաջին կարգի ատամնաբոյժերու, ձմեռները կիրակի օրերն ալ, ինչպէս նաեւ մինչեւ կէս գիշեր հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղինին։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ԲԱՐԻԶ, 15 օգոստոս.— Օրլէանի իշխանին և Դուրինի կոմսին մենամարտն երէկ առաւօտ տեղի ունեցաւ ի Բարիզ Վօքրէսոնի անտառին մէջ և տեւեց 26 վայրկեան։ Երեք անգամ զարնուեցան կատաղութեամբ։ Երրորդ անգամուն Օրլէանի իշխանն ուսէն վիրաւորուեցաւ, բայց կռիւը շարունակեց։ Ի վերջոյ իշխանը նորէն վիրաւորուեցաւ փորէն, սակայն ինք ալ Դուրինի կոմսը վիրաւորեց աջ ձեռքէն։ Իշխանին ուսին վէրքը թեթեւ է, բայց փորինը շատ ծանր է. բժիշկները տակաւին վճիռ չարձակեցին վէրքին ծանրութեան վրայ։ Իշխանն անմիջապէս Շառդրի դուքսին բնակարանը փոխադրուեցաւ. սաստիկ տենդ մը երեւան ելնելով իշխանն անկողին ինկաւ։ Ամբողջ օրը բազմաթիւ անձինք անուննին արձանագրեցին դուքսին բնակարանին մէջ։ Դուրինի կոմսը շնորհաւորական բազմաթիւ հեռագրեր ընդունեց՝ մանաւանդ Ումպէրդօ թագաւորէն։ Կոմսն իրեն ընկերացողներուն հետ Հռոմ դարձաւ։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Ռուս մամուլն եւ մանաւանդ Նովոյէ Վրեմիա խօսելով Աւստրիոյ և Պուլկարիոյ վէճին վրայ, կ'պախարակեն պուլկար վարչապետին անխոհեմ լեզուն։

ԲԱՐԻԶ.—Աւստրիոյ արտաքին գործոց նախարարն օգս. 5/17ին այցելութիւն պիտի տայ Մ. Ֆէլիքս Ֆօռի որ հետեւեալ օրը Ռուսիա պիտի ուղեւորի։

ԼԻԶՊՈՆԱ.— Բորթուգալի եւ Ճաբոնի դիւանագիտական յարաբերութիւնները ցարդ կ'վարէր Թոքիոյի իտալեան դեսպանը։ Բորթուգալ այժմ Ճաբոնի մայրաքաղաքին համար դեսպանութիւն վերահաստատելով այդ պաշտօնին կոչեց Մաքաոյի կառավարիչն որ արդէն իր պաշտօնատեղին գացած է։

ՆԻՒ ԵՈՐՔ.— Ամերիկեան լրագիրք կ'ծանուցանեն թէ զօր. Վէյլէր հրաժարական ղրկեր է Սպանիոյ պատերազմական նախարարին։

ՍԵՂԱՆԱՅԻՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

Գիներն իյնալու հակամէտ են եւ թոյլ զգուշաւորութիւն կ'շարունակեն ընել թէ՛ գնողք և թէ ծախողք, բայց մանաւանդ գնողք, զի սովորաբար տկար և թոյլ գիներուն կ'յաջորդեն զգալի անկումներ և քիչ անգամ միայն բարձրացում, հետեւաբար առ այժմ ոգեւորութիւն չկայ։

ՓԱԿՈՒՄ

Օսմ. քօնսօլիտէ Սէրի Դ. Օ. Ռ.		24	12
Ամենէն բարձր գին	»	24	13½
Ամենէն վար գին	»	24	07
Րումէլիի երկաթ. գոց.	ֆր.	115	25
Ամենէն բարձր գին		115	75
Ամենէն վար գին		115	12½

ԲԱՑՈՒՄ, 4 Օգոստոս

Օսմ. Քոնս. Սէրի Դ. Օ. Ռ.		24	11
Րումէլիի երկաթուղի	ֆր.	115	25
Օսմանիյէ	»	—	—
Ռէժի	»	—	—
Օսմ. Պանքա	»	15	—
Քրէտի ժէնէրալ օթթօմ.	»	7	08
Երկրագործական Պանքա	»	9	—
Սօս. Օթ. Շանժ է Վալ. Ա. Ռ.		3	17
Օսմ. Ապահ. ընկեր.	»	4	06
Թրամուէյ բաժնեթ.		690	—
» ժուիսանս		230	—
Թրամուէյ պարտաթ.	ֆր.	496	—
Տէրքօսի Ջուրի ընկ.	»	335	—
Քարափ Կ. Պոլսոյ	»	462	—

ՍԹԻԼԱՆՑ

Քօնսօլիտէ ութ օրուան Օ. Ռ.		3	50
» մէկ ամսուան »	»	—	—
Րում. երկ. ութ օրուան »	»	—	—
» » մէկ ամսուան »	»	—	—

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 ֆրանքնոց	ղրշ.	87	11
Անգլիական ոսկի	»	109	34
Բոլ Էմբէռիալ	»	89	30
Մէճիտիյէ արծաթ	»	108	00
Րուսիոյ Թղթադրամ Օ. Ռ.		8	59

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	ղրշ.	108	3/4
Փարիզ 3 »	ֆր.	23	12½
Ֆիօրին մանտա	»	10	92½

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, 14 Օգոստ.

Օսմ. քօնսօլիտէ Սէրի Ա. Ա. Ռ.		66	—
» » » Բ.	»	38	50
» » » Գ.	»	23	25
» » Դ.) բաց.	»	22	12
) գոց.	»	22	—
Փոխառութիւն Դասապա Գ. Կ.		80	50
» Օսմ. 3½%	»	99	—
Օսմ. Կայս. Պանքա	»	13	63
Այտընի երկաթուղի	»	15	—
Եգիպտական Միացեալ	»	107	25
Անգլ. քօնսօլիտէ	»	112	12
Հելլենական 5%	»	30	—
Մօնօբոլ հելլենական 4%	»	34	—
Ռանթ » 4%	»	25	—
Պուլկ. փոխառ. 6% 1888 Գ. Կ.		94	—
» նոր » 6% 1892	»	94	—
Փոխան. Փարիզի վրայ	»	25	31¼
Դրամագլուխ	»	2	—

ՎԻԷՆՆԱ, 14 Օգոստ.

Փոխան. Փարիզի վրայ	ֆիօր.	47	67
» Լոնտոնի վրայ	»	119	95
Րումէլիի երկաթուղի	»	65	—
Օսմ. Ռէժի	»	162	50

ՓԱՐԻԶ, 14 Օգոստ.

Օսմ. քօնս. Սէրի Դ.) բաց.	ֆր.	22	37
) գոց.	»	22	35
» » » Բ.	»	39	95
» » » Գ.	»	23	60
Օսմանիէ	»	412	—
Րումէլիի երկաթուղի	»	117	50
Բալօտիզէ	»	460	—
Մաքսատուն	»	481	—
Օսմ. Ռէժի	»	343	50
Օսմ. Կայս. Պանքա	»	592	50
Ֆրանս. Ռանթ 3%	»	105	—
Քրէտի Լիօնէ	»	785	—
Պանք տը Բարի	»	863	—
Սուէզի բաժնեթուղթ	»	3254	—
Եգիպտական Իւնիֆիէ	»	—	—
Իտալական Ռանթ	»	94	15
Սպանիական արտաքին	»	61	75
Չէք Լոնտոնի վրայ	»	25	205
Դրամագլուխ	»	2	—

ԲԵՐԼԻՆ, 14 Օգոստ.

Օսմ. փոխառութիւն 1888	մարք	93	10
Րումէլիի երկաթուղի	»	117	—
Անատ. երկ. պարտաթուղթ.	»	90	10
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20	285

ԱԶԴ.—Հայերէն, ֆրանսերէն եւ թուրքերէն լեզուաց հմուտ անձ մը՝ որ իր բազմամեայ ծառայութեամբքն ի կրթական յարկս, ոչ նուազ օգտամատոյց եղած է կրթական գործին, պատրաստ է, դիւրամատչելի պայմաններով, յանձն առնուլ որ և է պաշտօն, ուսուցչի կամ տնօրէն-ուսուցչի, ի գաւառս կամ ի Պոլիս։ 5—10

ԻԼԱՆ

Թիճարէթ վէ Նաֆաա Նէզարէթը ճէլիլէսի տայիրէսինտէ լիւզիւմը օլան 5000 աթիգ գըլէ Սթրանճա քէօմիւրիւնիւն պէհէր 100 գըլէսի 42 ղրշ.տա թալիպի էօհտէսինտէ պուլունտուղը վէ աղուսթօսըն 7ինճի բէնչշէնպիհ կիւնիւնէ գատար մինագասասը պիլ իճրա եէվմը մէզքիւրտէ գարարը գաթիի վիրիլէճէկի ճիհէթլէ տահա աչաղը ֆիյաթ իլէ իթայա թալիպ օլանլարըն չիմտիտէն Նէզարէթը միւշարիւլէյհաեա մուհասէպէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։ 3—3

28 Թէմմուզ 313

ՌՕՍԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20 ի կայս. Իրատէով արտօնեալ Ընկերութեան կեդրոնատեղին Բեթերսպուրկ Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37 Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ. — ԿԵԱՆՔ. — ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՐԿԱԾՔ.

Ընկ. դրամագլուխ ամբողջովին վճարուած	10,000,000 ֆր.
Երաշխաւորութեան գումար	67,000,000 »
1895 ի հասոյթք	25,000,000 »
1881 էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ	100,000,000 »

Ընկերութեան քննիչ ի Կ. Պոլիս Ա. ՀԻՒՐՄՈՒԶ

Ղալաթիա, Բարաքեօն վրայ (Դին Մուտատան փէղը)

Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար ԹԷՕՏՕՐ ՐԷԹԹԷՆ

ԻՒՆԻՕՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ — ՀԻՄՆԵԱԼ 1828
ԿԵՆԱՑ ՃԻՒՂ — ՀԻՄՆԵԱԼ 1829

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՓԱՐԻԶ ՔԱՆԴ ՓՈՂՈՑ ԹԻՒ 15, ԻՒՐ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՄԷՋ

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ		ԿԵՆԱՑ ՃԻՒՂ	
Դրամագլուխ	Ֆր. 10,000,000	Դրամագլուխ	Ֆր. 10,000,000
Պահեստ	» 7,650,000	Պահեստ	» 104,500,000
Թղթապանակի մէջ	» 69,246 000	Ապահովագրութիւնք	» 250,000,000
Հասոյթ 1892 տարւոյ	» 16,000,000	Հասոյթ 1892 տարւոյ	» 17,750,000
Հատուցուած վնաս	» 176,000,000	Հատուցուած վնաս	» 65,000,000

Ընկերութեան դրամատունն է Օսմ. կայս. Պանքան.
Մանրամասնութեանց համար դիմել առ. մասնաւոր Տնօրէն Տ. ՍԻՄՕՆ ՔԱՑՍԷՐԼԵԱՆ
Կ. Պոլիս, Կալաթա, Քարաքէօյ Եէնի-Խան Ա. յարկ:
Կենաց ճիւղին Տեսուչ, ՄԻՀՐԱՆ ՏԷՐ ՍԻՄՕՆԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ Կ. ՊՈԼՍՈՅ

ԱՐՄՏԻՔ. — Ցորեն. — Վերջացող շաբթուն ժամանեցին 77,000 քիլէ ցորեն, կակուղ զանազան տեսակ Անատոլու: Վաճառուեցան 77,000 Անատոլու 22½-23 ղրշ. էն: Կարծր ցորենն Հաամու ու ծախուեցաւ 22,000 Անատոլու՝ Եւրոպայի համար օխան 38-39 փարայէն: Եգիպտացորեն. — Եւրոպայի համար 1,000,000 օխա Սեւ ծով ծախուեցաւ օխան 18½-18 փարայէն: Իզմիրի մէջ կ'արժէ 34-36 փարայ: Գարի. — Տեղական սպառման համար 8000 քիլէ Դանուբ ծախուեցաւ 9¼-10 ղրշ. էն: Անատոլուէն 7000 քիլէ հասաւ ու ծախուեցաւ 9½-9¾ ղրշ. էն քիլէն: Հրապարակն ողողուած է. սպառման համար գործ չկայ: Իզմիրի մէջ կ'արժէ քիլէն 9¼-13 ղր., ըստ տեսակին: Վարսակ.—Խնդրանք կայ: 2000 թոփ նոր հունձք ծախուեցաւ: Մարսիլիայի մէջ Պանտրմայի եւ Ռոտոսթոյի գինն է 15 և Սամսոն 13.50: Իզմիրի մէջ նոր հունձքը գնող կայ օխան 22 փր. էն՝ Մէճիտիյէն 33 ղրուշի հաշուով: Թուղնուկեր.— Խնդրանք կայ բայց գործ չկայ, թէեւ հին հունձքի պատրաստի քանակութիւնը շատ է: Նոր բերքէն ժամանում չեղաւ: Մարսիլիայի մէջ Ռոտոսթոյի տեսակի գինն է 19: Իզմիրի մէջ 29½: Սուսամ.— Եւրոպայի համար 500 պարկ ծախուեցաւ 85էն: Իզմիրի մէջ կ'արժէ 87 փարա: Սիսեռ.—270 պարկ Անատոլու ու Դարդանէլ ծախուեցաւ օխան 31-32 եւ 44-45 փր. էն:

ԱԼԻՒՐ. —Վերջացող շաբթուն ժամանեցին ու ծախուեցան 6,800 պարկ, որոց 500ն Օտեսա 110-120 ղրշ. էն պարկը, 4700 Սամսոն 85-90էն, 1500 Իպրայիլ 110էն և 100 Վառնա:

ԳԱՂԹԱԲԵՐՔ. — Շաքար. — Ժամանեցին 1560 պարկ Թրիէսթէ եւ 432 ռուսական. 1560 Թրիէսդէ ծախուեցաւ 80-82 ղր. էն եւ 432 ռուսական 76էն: Խահուէ. — Ժամանեցին 675 պարկ. ծախուեցան 675. Հրապարակը տկար է: Կ'արժէ պարկը 7½-8½ օսմ. ոսկի: Բրինձ. — Ժամանեցին 600 պարկ եգիպտական և ծախուեցան պարկն 70-74 էն: Սէպէրիական կարագ.— Թակառոցի վրայ գործ եղաւ օխան 9⅞-10¼ ղրուշէն: Մոմ. — Ցաւնիէ ու Աբոլլոն չժամանեցին: Օսմանիյէի գինն է սնտուկը 45 ղրուշ և Ռաֆորը՝ քիլօն 3¾ ղրշ.: Բարեւող.— Սնտուկը 21½ ղրշ., ոսկին 100 ղրշէն:

ՄԵՏԱՂ. — Երկաթ. — 100 թոնօ ժամանեց: Շատ գործ չեղաւ: Մետաղի միւս տեսակներուն վրայ նշանակութեան արժանի գործ չեղաւ:

ԱԼԿՈՀ.—Ծախուեցան 160 տակառ՝ 41-47 օխան մէկ օսմ. ոսկւոյ:

ՀԱՆՔԱՅՈՒԽ. — Կարեւոր գործ չեղաւ:

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ. — Հրապարակի վրայ շատ գործ չկար. գիներն հաստատուն էին: Մանածի, մարմաշի, կտաւի և ապածոյի վրայ քիչ շատ գործեր եղան:

ԱՐՏԱԾԵԼԻ ՆԻՒԹԵՐ.— Թիֆթիկ.— 500 հակ ծախուեցաւ օխան 17-18½ ղրշ. էն: Բուրդ.— Նոր բերքերը ժամանեցին, բայց վաճառում չեղաւ: Բամպակ.— Ժամանում և վաճառում չկայ: Մետաքս.— Շաբթուս քիչ գործ եղաւ: Ի Լիոն Պրուսայի բժժական մետաքսի (կոճ) գինն է 36-39 ֆր. Սուրիա՝ 36-38 և Պրուսայի կրկնոլոր մետաքս (Օրկանսէն) 41-42 և Սուրիա՝ 44: Մարսիլիոյ մէջ մէկ քանի գործ եղաւ Սուրիոյ բժժական մետաքսի վրայ՝ 33-35.75 ֆր. էն: Կապլիճ—Մինչ ժամանում կայ բայց վաճառում չըլլար: Աֆիոն. — 2 սնտուկ Պալըքէսէր ծախուեցաւ 100էն և 2 Կէյվէ 90 ղր. էն օխան: Իզմիրի մէջ նոր բերքին գինն է 61-62 և հինն 72. հին տեղականն 71: Գազի Եէղ.—17 սընտուկ Սըվազ նաթիւռէլ ծախուեցաւ օխան 15 ղրուշէն: Նոր բերքերն 2 ամսէն կ'ժամանեն: Պատրաստ կայ 1700 պարկ: Մահմուտիյէ.—Օխան 60-200 ղր.: Սալէպ. — Օխան 12½-15½ ղրշ: Դեղին Փեղրոսոն.— 19-19½ ղրշ: Դեղին ճէհրի.—Օխան 1½-3¼ ղր: Գիտրոր.—Օխան 5-5½ ղրշ: Մորթ.— 5000 նապաստակի մորթ ծախուեցաւ 100 հատը 105 ղրշ. էն մէճիտիյէն 20էն: Ընկոյզ.—Օխան 36-40 փարա. Կաղին. —Կենդինարը 94-95 ղրշ: Խողկոչին.— Կենդինարը 30-60 ղրշ: Պոռոզ.—Գործ չեղաւ: Նուշ. — 5-5½ ղրշ: Զաֆր.— Օխան 20 փր. էն 4½ ղրշ: Թուղ. —1½-3¼ ղրշ. օխան: Մատթէկա.— Օխան 22-45 ղրշ:

ՄՕԳԱԿԱՆ ՆԵՐԿ



Նոր գիւտ մը, որ կ'բաղկանայ արմատներու նիւթէ ու խոտերէ, մազերու գոյնը սեւի կամ շագանակագոյնի կ'վերածէ բնականին նման: Սպիտակ կամ կարմիր մազերը կ'վերածուին բաց շագանակագոյնի և կամ մութ սեւի: Փորձը ցոյց տուած է որ այս ներկ ուրիշներէն գերազանց է և այնքան բնականին նման է որ մանրազննին դիտողն անգամ կ'խաբուի: Մազերուն անկումը կ'արգիլէ, թեփերը կ'վանէ ու մաքուր կ'պահէ մազերը: Գործածութեան եղանակը. —Գործածելէ առաջ սրուակն աղէկ մը շարժել յետոյ փոքր չափ մը պնակի մէջ դնել և սանտրով կամ խոզանակ մը թեթեւ մը թրջելով մազերուն լաւ մը քսել, այնպէս որ ամբողջ մազերը թրջէ. մինչեւ չորնալը գլուխը բաց կենալ: Վաճառատեղին է Թուրքիոյ մէջ իր միակ գործակալին Էսմօն Պարուանայի. անգլ. ընդհ. մթերանոց՝ 95—97. Ղալաթիա, Եիւքսէք-գալտըրըմ, Վօյվօտա, Կալաթա-Շիշլիի թրամվէյներու կայարանին մօտ:



ՄՈՍ
ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվըրբուլ և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւեր

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ամասիա	3500	Թիպա	2500
Փամֆէա	3500	Մարէօթիս	2500
Մէմֆիս	3500	Նէրգիս	2500
Անխիալոս	3000	Բերա	2250
Ասօր	3000	Օսիրիս	2250
Անօրիոս	3000	Սֆինքս	2000
Օսմանլի	3550	Կաւքոնի	1500
Ֆարոս	2750	Կիէն	1500

Դիմել առ Ժ. Վ. ՌՈՒԹՕԼ և ԸՆԿ.
Ռեւթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
34, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

ԲՕՈՒԷԼԻ ԱՆԻՍՈՆԻ ՊԱԼՍԱՄ

Հազի, հարբուխի, շունչի կարճութեան, ընչերքելութեան դէմ, Ելն.

Այս թանկագին դեղը տարօրինակ յատկութիւն ունի անմիջապէս ափոփելու հարբուխը, հազը, կոկորդի ցաւը, դժուարաշնչութիւնն, եւլն: Իր ազդեցութիւնը կ'ընէ կարծրացած մաղասը կակուղցնելով եւ արտաքսումը դիւրացնելով: Կոկորդի անհանգոյ խախտումներով դիչեր ցերեկ հազացող եւ հանգիստը կորմնցնող անձինք կը հանգստանան եւ մէկ շիշը բաւ է հիւանդութիւնը բուժելու: Այս աննման դեղ հրաշքներ կը գործէ շնչարգելութեան, հինցած հազի, էնֆլիւէնցայի եւ ուրիշ պարագաներու մէջ:

ՎԿԱՅԱԳԻՐ

Ստորագրեալս, Թուրշուճը Հազգը էֆ., բնակեալ Տօլմա-Պաղչէ, թիւ 25, կը վկայեմ որ 40 տարիէ ի վեր շնչարգելութենէ տառապելով համբաւաւոր բժիշկներուն դիմեցի եւ շատ ստակ վատնեցի, բայց օգուտ չտեսայ. Հիւանդութիւնն օրէ օր սաստկացաւ: Ինչ ընելիքս չէի գիտեր, երբ բարեկամներ խորհուրդ տուին որ դիմեմ Կալաթա, Վոյվոտայի պահականոցին քով, թիւ 95-97, Պ. Էս. Բարուանայի անգլ. վաճառատունը: Հոն ծախուած «ԲՕՈՒԷԼԻ ԱՆԻՍՈՆԻ ՊԱԼՍԱՄ»ը գործածեցի եւ 3 ամիսէն կատարելապէս բժշկուեցայ: Եւ զայս հրատարակելը մարդասիրական պարտք կը համարիմ: Կ. Պոլիս, 4 ապր. 92. Ստորգ. ԷՍԱՏ ՀԱԶԳԸ

Ընդհ. Մթերանոց Էսմօնտ Բարուանայի անգլ. վաճառատունը Կալաթա, Վոյվօտա փողոց Թ. 95-97: Կը գտնուի նաեւ բոլոր դեղարաններն և դեղավաճառաց քով:

ՃՇՄԱՐԻՏ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ
ՍԻՆԿԷՐ
ԼԱՒԱԳՈՅՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Կ' ՆԱՅՏԼԻՆԿԷՐ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ի ԳԱՒԱՌՍ ԵՒ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԲԵՐԱ. — Մեծ-Փողոց կալաթա Սէրայի Լիսէին դիմաց:

ՂԱԼԱԹԻԱ. — 1. Սինկէր խան, Թիւնէլի եառին: 2. Գարաքէօյի մօտ թիւ 120, Շիշլիի թրամուէյներու կայարանին դիմաց:

ՊՈԼԻՍ. — Սիրքէճի, Հօճա-Փաշա, Պապը Ալի ճատտէսի թիւ 11:

ԼԸ ՆԻՒ-ԵՈՐՔ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆՊԱՏՐԱՍՏԳՈՒՄԱՐ
970,000,000 ՖՐԱՆՔ

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ Ե՛ՒՐՈՊԱ
Փարիզ, 16, Պուլվար տը՛Իթալիէն 1, 3 եւ Լը Բէլըթիէ փողոցի տէփօլան լէնէին մէջ
1845 հիմնուելէն ի վեր

Ապահովագր. ներու վճ.	1,219,000,000
1896 ի տարեշրջան	
Ապահովագրեալներու վճ.	96,000,000
Հասոյթ	203,000,000
Նոր ապահովագրութիւնք	630,000,000
Ապահովագրուողներուն փոխ տրուած	15,000,000
1897 յունուար 1	
Աւանդք և անշարժ կալուածք յԵւրոպա	43,000,000
Ցաւելեալ դրամագլուխ	138,000,000
Արդի ապահովագրութիւնք	4,285000000

Տոնթինեան ապահովագիր

Շահաբաժիններու բարդմամբ և ապահովադիրներու վերադարձմամբ՝ ի դէպ մահու: Պայմանագրութեան նոր եղանակ, սկսեալ Առաջին տարւոյն լրանալուն պէս: ԱՌԱՆՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԻ ի մասին բնակութեան և ուղեւորութեան: Հինգ տարի եաքը ԻՐԱՒՈՒՆՔ տալով Ընկերութենէն փոխառութիւններու որոց գումարը նշանակուած է ապահովագրին մէջ: Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար դիմել առ

Տնօրէնութիւն ի Թուրքիա
Ժ. ՌՒ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ.
Վօյվօտա փողոց, Վիթալիս խան
Ղալաթիա

Հրատարակուելու համար յղուած կամ նամակ ղրկողներէ կ'խնդրենք որ թղթին միայն մէկ երեսին վրայ գրեն: Երկու երեսի վրայ գրուելէն շատ յապաղում և դժուարութիւն կ'ծագին:

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ», ՕՐԱԳՐՈՅ
Կ. Պոլիս, Nº 38, Պապը Ալի Ճատտէսի

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (51)

ԺՕՐԺ ՕՆԷ
ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ
ՏՈՔԴՈՐ ՌԱՄՕ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

—Իսր թէ ուրիշ բան մը կարելի ըլլար ընել, ըսաւ Ռամօ խնդալով, առանց գլուխը դարձնելու:

Այսպիսի կացութեան մը առջեւ, որուն մեծապէս պարտ էր հետաքրքրել անտարբեր մնալու այս յամառութիւնը վերջապէս գրգռեց զթալվան: Համբերութիւնը կորսնցուց և գոչեց.

—Բաւ՛ տեսնեմ, չես կրնար այն աստիճան անզգայ ըլլալ որ ըսածս անխռով մտիկ ընես: Խնդիրն ա՛յն կնոջ վրայ է որոյ զաւակն որդեգրած ես... Տէրունի փարքեսիդ, պաշտպանիդ անունը կը կրէ, վասն զի եթէ նա չըլլար, ի՛նչ պիտի ըլլայիր դուն:

—Թերեւս երջանիկ մարդ մը:

—Ռամօ, գոչեց քիմարաբոյժը, տառապեցար, կը տառապիս և դեռ պիտի տառապիս, բոլոր մարդոց ճակատագիրն է այդ: Բայց անմեղնե՞ր պատասխանատու պիտի ըլլան վճարել: Նմաններուդ վրա՞յ կ'ուզես ծանրացնել դժբախտութեանդ ոխն: Ուրիշներուն ցաւոց տեսարանը պիտի սփոփէ՞ քու ցաւդ: Վեհանձն ու բարեսիրտ ճանչցած եմ զքեզ: Հիմա անձնասէ՞ր ես ու վատ: Ըսածս կ'ըմբռնե՞ս: Ի՞նչ խօսք արտասանելու եմ որ մինչեւ սիրտդ ազդէ: Կին մը կը մեռնի, զայն մահուանէ փրկելով կրնաս նուիրական պարտք մը կատարել: Կ'ուզե՞ս ընել այդ բանը:

Փայլակ մը ցայտեց Ռամոյի աչերէն, երկու կաթիլ արտօսր հոսեցան այտերէն վար որք կարմրեցան: Ոտք ելաւ, կորաքամակ ուսերը շտկուեցան, իր խիտ մազերով գլուխը շարժեց և իր բովանդակ կորովը վերստանալով, հաստատ ձայնով մ'ըրաւ.

—Իրաւունք ունիս, Ներէ ինձ, կ'երթամ:

—Ո՞հ, վերջապէս խելքդ գլուխդ եկաւ, գոչեց Թալվան սաստիկ ուրախացած, իր թեւերուն մէջ սեղմելով զայն: Եկո՛ւր, ես պիտի առաջնորդեմ քեզ:

Ես առանց ժամանակ տալու անոր որ մտածէ, ագուլըպէս հագուեցուց զայն, խանդավառ խօսքերով քաջալերեց, իր կառքն առաւ և մահամերձին անկողին քով տարաւ:

Դաշինքը՝ զոր Ռամօ գոցցեր կնքած էր մահուան հետ և որուն մահը մէկ անգամ միայն այլ չարաչար անհաւատարիմ եղած էր, այն ատեն առաւել քան երբեք հաստատուն երեւցաւ: Երեք օրուան մէջ, Տիկին Սերվան կը վերակենդանանար, եւ իր ազատարարն ալ իրմէ շատ աւելի ազատուած էր: Այս յաղթութեամբ Նորէն ճաշակ առած էր տառապանքի դէմ՝ մղած պայքարէն: Աշխատութեան ոգին նորէն վառուած էր իր սրտին մէջ. այս վայրկենէն սկսեալ, այլ եւս չէր կրնար խուսափիլ անոր ձեռքէն:

Ցանկարծ, կերպարանափոխութիւն մը յառաջ եկաւ անոր վրայ: Կարծես թէ քանի մ'ամսուան մահաբեր թմրութենէն մը յետոյ, կը զարթնուր և իր բովանդակ մտածութիւնը կը վերստանար՝ յղանալու համար, իր բովանդակ կորովը՝ գործադրելու համար: Նորէն երեւցաւ Բժշկական Վարժարանին մէջ, և իր առաջին դասն՝ որ ուսանողաց մեծ բազմութիւն մը յանկուցած էր, յաղթանակ մը եղաւ: Ամէն ոք երջանիկ էր տեսնելով որ այս հզօր միտքը կը վերակենդանանար և աւելի պայծառ լոյսեր կ'արձակէր: Նորէն հմայուեցան: Իր խօսելու տաղանդը կարծես զտուած մաքրուած էր: Թերեւս այնքան առնական չէր հիմա որքան յանցելումն, բայց մելամաղձոտ բանաստեղծութեամբ մը աւելի խանդաղատեալ էր որ աւելի խորապէս զգեցիկ հրապոյր մը կուտար: Անոր մէջ կարծես կը լսուէր իր տառապանաց մէկ արձագանգը՝: Մարդկային ուրախութեանց և ցաւոց ծայրագոյն վախճանը ճանչցած էր և իր հանճարն անոր մէջ գտած էր լիակատար զարգացում մը:

Ատենօք Ռամոյի վրայ կ'ազանչանային, և անկէ կը զարհուրէին իր զօրութեան և դառնութեան համար: Հիմակ, իր անդրուելի տրտմութեան և անսահման հեզութեան համար, կը սիրէին եւ կը մեծարէին զինքը: Իր հարստութիւնն, որ այն ատեն ահագին էր, վասն զի ուզածին չափ կը շահէր, նեղութիւն մը դարձաւ իրեն համար, և տեղ փնտռեց զայն ծախսելու, կարելի եղածին չափ աւելի բարիք գործելով: Վիրաբուժական դարմանատուն մը հիմնած էր ուր իր աշակերտներուն հետ միաբանութեամբ, աղքատ մարդոց վիրահատութիւնները կը կատարէր: Շաբաթն երկու անգամ ձրի խորհրդակցութիւն կը կատարուէր Սէն-Տոմինիք փողոցի ապարանքին մէջ: Ռամօ «Թշուառներուն բժիշկ»ը կոչուելու աքանչելի տիտղոսին արժանացաւ: Բաւական էր տառապիլ՝ անոր բարեացակամութեան և խնամոց վրայ իրաւունք ունենալու համար: Եւ ի՜նչ խնամք: Կայսրերն ու թագաւորներն անգամ իրենց շուրջը չունէին բժիշկներ որք կարենային ի կշիռ գալ այս կախարդչին հետ որ ցաւը կ'ընդարմացնէր, հիւանդութիւնը կ'զգետնէր և մահը շղթայակապ կ'ընէր:

Թալվան յաղթանակելով երիտասարդացած էր: Իր կատարած բուժման խանդավառ հետապնդելով, որոյ պատիւն իրեն կը վերագրէր ծածկաբար, կ'օգնէր Ռամոյի, անոր բարեգործական բոլոր ձեռնարկութեանց կազմակերպման մէջ: Դարմանատան պէտքերը կը մատակարարէր, պաշտօնավարութեան վրայ հսկելով, վարձքն և հիւանդապահներուն թոշակները կը վճարէր: Հաստատութեան եկամտական մասն ինք կ'առանձնէր և գիտական մասը կը թողուր իր բարեկամին:

—Ես, իմ հիւանդանոցիս շնորհիւ, կ'ըսէր, նիւթականի մասին վարպետ եմ, և չե՛ս կրնար խաբել զիս: Դուն բարեկամս, գործէն բան մը չես հասկնար: Դուն թեւեր ու սրունքներ կարկատէ, ուռոյցներ արմատաքիլ ըրէ հանէ՝, կիներուն փորը ճեղքէ և վերստին կարէ, այնպէս որ առաջուանէն աւելի հաստատուն ըլլան, ասիկա քու գործդ է և ոչ ոք կրնայ այս մասին մրցիլ քեզ հետ: Անձնիւր ոք թո՛ղ իրեն վերաբերեալ գործին նայի, գերազանցօրէն պիտի ընթանանք:

Եւ կ'սկսէր խնդալ, մորթը գերծելու չափ սաստիկ շփելով ձեռքն, իր զգացած տարապայման գոհունակութեամբ:

Երբեմն, երեկոյին, փոքրիկ Ատրիէնը ծունկերուն վրայ առնելով կ'ըսէր:

—Հայրդ մեծ մարդ մըն է: Օր մը, հանրային հրապարակի մը վրայ, արձան մը պիտի կանգնեն իրեն, ինչպէս մեծ պատերազմի մը, որ և իցէ մէկ դիւցազնին, և հայրդ աւելի արժանի պիտի ըլլայ անոր, աղջիկս, վասն զի աւելի փկեցիկ գործ մ'է փառք ստանալ՝ օգնելով մարդոց որ ապրին քան թէ բռնաբարելով զանոնք որ մեռնի՛ն:

Թարգմանեց Բ. Մ. ՊՕՉԱՃԵԱՆ (Շար.)